№ 179 ԿԻՐԱԿԻ, 15 ՕԳՈՍՏՈՍԻ 1910 ԿԻՐԱԿԻ, 15 ՕԳՈՍՏՈՍԻ № 179

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն՛ լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատողին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հնարաւորութիւն չունենալով մի առ մի յայտնել իմ շնորհակալութիւնս այն անկեղծ մխիթարական զգացմունքների համար, որոնք արտայայտվեցին ինձ թէ անձամբ և թէ հեռագիրներով իմ կնոջ՝ ուսուցչուհի

ԵՐԱՆԵԱԿ ՋԱՆՋՈՒՂԱՋԵԱՆԻ

մահվան առիթով, սրանով հրապարակով յայտնում եմ բոլոր բարեկամներիս, ծանօթներիս, ընկերներիս և հանգուցեալի ընկեր ուսուցիչ-ուսուցչուհիներին իմ խորին շնորհակալութիւնը։ Նոյնպէս շնորհակալութիւնս եմ յայտնում Ղզլարի ծխ. հոգաբարձութեանը, կատարած հոգեհանգստի համար, և նոյն հոգաբարձութեան նախագահ պ. Յ. Մեհրաբեանին՝ հոգեհանգստի ժամանակ արտասանած նրա սրտառուչ ճառի համար, որը որոշ չափով փարատեց վիշտս։

1—1 943. Գէորգ Ջանջուղազեան

ՄՕՍԿՕՎԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ. ԱԼՃՎԱՆԳԻ
պատիւ ունի տեղեկացնելու իր յարգելի կլիէնտներին, որ նա համաձայնութիւն է կայացրել Նիկոլսկեան Մանուֆակտուրային Ընկերակցութեան հետ՝
ՍԱՎՎԱ ՄՕՐՕԶՕՎԻ Որդի եւ Ընկ.
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ,
որի համար և յուլիսի 1-ից 1910 Թ. Առևտր. Տան Թիֆլիսի խանութում, Դվորցովայա փող. վրա, բացվում է ՆՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ, յատկապէս ՆԻԿՕԼՍԿԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԸՆԿԵՐ.
ՍԱՎՎԱ ՄՕՐՕԶՕՎԻ ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿ.
գործուածքները վաճառելու համար։
ԲՈԼՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՎԱՃԱՌՎԵՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ
(4.) առ. Տելեֆօն № 477. 933. 4—1

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ և ԿՈՄ." ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Պետերբուրգի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ռուսական էլեկտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բեռլինի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ակց. ընկ., Բեռլինի «ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԷՐՏ-ՎԷՐԿԷ» ակց. ընկ., Կօլոմէնի մեքենագործական ընկ. եւ Եղբ. «ԿՐՕՍՍԼԷՅ» անգլիական գործարանի ներկայացուցիչներ։

ԷԼԵՔՏՐՕՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Դինամօ-մեքենաներ, էլեկտրաշարժիչներ ամէն տեսակ և ույժի մշտական և փոփվող էլեկտր. հոսանքի համար։ Էներգիայի յանձնումն որոշ հեռաւորութեան վրա։ Քաղաքներ և մասնաւոր ձեռնարկութիւններ լուսաւորելու համար կենտրոնական կայարանի սարքումն։ Տրանսֆորմատորներ։ Օդամաքրիչներ ամէն տեսակ նպատակի համար։ Օզօնի օդամաքրիչներ։
ԷԼԵՔՏՐ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Մշտական և փոփոխվելիք լուսաւոր. համար մէկ և բազմաֆազ հոսանք։ Երկաթուղային ազդանշան։
ՀԵՌԱԳՐԻ ԵՒ ՀԵՌԱԽՕՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Անթել հեռագիր։ Հեռագրական ապարատներ։ Ամէն տեսակ հեռախօսներ։ Վտանգալի ազդանշան գործիքներ։
ԼԱՄՊԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	ԱՂԵՂՆԱՁԵՒ լամպաներ՝ ուղղագիծ և սովորական։ Տնտեսական լամպաներ „ՏԱՆՏԱԼ" և „ՄԻ-ՊԱՏՐՈՅՖԱՅԻՆ ԼԱՄՊԱՆԵՐ"։ Լամպաներ ածխային թելով։

ՊԵՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեկտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեկտրական կառուցուածքների համար և այլն։
ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման։
Տելեֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.
(4.) առ. № 1. 433. 26—10

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ՋՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Այսօր, կիրակի, օգոստոսի 15-ին
Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը
կը ներկայացնէ
ԴՕՆ-ԳՐԻԳՕՐԻՕ
Կօմ. 3 գործ. Թարգմ. Թուխեանի
ԴՕԿՏՕՐ ԹԱԹՕՍ
Վօդեվիլ 1 գործ. հեղ. Չէխովի, փոխ. Ա. Սարգսեանի
Սկիզբն է ճիշդ 8½ ժամին երեկոյեան։
Վերջը՝ ոչ ուշ քան 12 ժամը։
Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպէկ։
Հերթ. կարգադրիչներ՝ Երիցեան
Թումանեան

Թիֆլիսի ժողովարան
ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՇԱԲԱԹ
✦ տեղի կունենայ ✦
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՋՈՐՍ ԵՐԵԿՈՅԹ
Երեքշաբթի օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԳ ԽՈՒՄԲ, ՍԱԶԱՆԴԱՐ, ՊԱՐԵՐ։
Հինգշաբթի և շաբաթ օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԳ ԽՈՒՄԲ։
Կիրակի օրերը՝ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ և ՍԱԶԱՆԴԱՐ։
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ռուբ., կանայք 50 կ.։
ԱԶԴ.—Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ երեկ. ժամը 6—8-ը՝ երեխաների համար—ՊԱՐԵՐ։
(4.) առ. 729. 0—10

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿՈՒՄ

Ուղիղ մի ամսից յետոյ Էջմիածնում պէտք է տեղի ունենայ միւռօնօրհնութիւն, և այդ առիթով այնտեղ կը հաւաքվի հայութիւնը զանազան կողմերից։

Կրօնական տօնին կից հայ մարդիկ կը հետաքրքրվեն և այն հարցով, թէ որքան օգտաւէտ են գնում հանրային գործերը, ինչ վիճակի մէջ են կրթական, վարչական, կալուածական խնդիրները։

Ուխտաւոր հայութիւնը կը տեսնէ Էջմիածնում մի քանի սկսված գործեր և մի շարք ծրագիրներ, որոնք սպասում են իրանց իրագործութեան։

Եւ ահա այդտեղ կարևոր է, որ մարդիկ փոքր ինչ աւելի մօտ առնեն իրանց սրտին հանրային գործերը և իրանց կողմից աջակցեն նրանց առաջընթացութեան։

Էջմիածնում ներկայումս շինվում են Վեհարանը և Մատենադարանը, մօտ է իր իրականացման Էջմիածնի Մայր-Տաճարի վերանորոգութեան ծրագիրը։

Պէտք է նոյնպէս մօտ լինէր իրագործութեան և Էջմիածնի հողերի ոռոգման խնդիրը, որի վերաբերութեամբ եղել են այնքան նախապատրաստական աշխատանքներ, բայց վերջին ամիսներում նա փոքր ինչ դանդաղ է առաջ գնում։ Անշուշտ, ցանկալի էր, որ առաջիկայ շաբաթներում նախնական գործողութիւնները համարվէին աւարտված և սկիզբ դրվէր խոշոր ձեռնարկութեան իրագործութեան։ Հայութեան համար մի մեծ մխիթարութիւն կը լինէր, եթէ նա կարողանար միւռօնօրհնութեան օրերում տեսնել սկիզբ դրված և ուսուցչական Թօշակարկղի հիմնարկութեան, որի նշանակութիւնը և կարևորութիւնը պարզվեց և ապացուցվեց վերջին ամիսներում մեր հասարակութեան մէջ։

Ծանր է արձանագրել, որ Էջմիածնին չաջողվեց գտնել Ճեմարանի համար տեսուչ և բարւոքել նրա մանկավարժական գործունէութիւնը աւելի հիմնաւոր կերպով։ Ճեմարանի շուրջ տեղի ունեցած վերջին տարիների անպատեհութիւնները հասցրին գործը այնպիսի վիճակի, որ այլ ևս ոչ ոք չէ ցանկանում մօտենալ այդ հիմնարկութեան, որի վրա ամենքը դրել էին այնքան յոյսեր։ Ճեմարանը կարօտ է թէ կրթական բարեփոխութեան և թէ նիւթական աւելի մեծ ապահովութեան, որպէսզի նա կարողանայ բաւարարութիւն տալ այն պահանջներին և սպասելիքներին, որ ունի հայ հանրութիւնը նրա վերաբերութեամբ։

Միևնոյն ժամանակ բոլորին հետաքրքրում է կալուածական կառավարութեան և ղեկավարութեան խոշոր գործը, որը վաղուց դրված է քննութեան ասպարէզի վրա, բայց մինչև այժմ դեռ առաջ չէ տարված հաստատ ծրագրով և վարչական կազմակերպութեամբ։

Մենք գիտենք, որ Վեհափառ Կաթողիկոսը մտադրել է Էջմիածնի վերաբերեալ գործերով, և ցանկալի է, որ թէ նրա շրջապատողները և թէ հայութեան հանրութիւնը աջակցեն նրան իրականացնելու այն ծրագիրները և հերթական խնդիրները, որոնք դրված են քննութեան սեղանի վրա։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 13 օգոստոսի

Նորին Մեծութեանը բախտ ունեցաւ ներկայանալու առաջին անդրբայկալեան կօզակների՝ Թագաժառանգի անուան բատարէյայի պատգամաւորութիւնը, որ եկել էր մատուցանելու իր Օգոստափառ Շէֆին բատարէյայի համազգեստն ու ձին բոլոր սպառազինութեամբ։ (Հ. Գ.)

Բրիւսէլ, 13 օգոստոսի

Համաշխարհային ցուցահանդէսի վարչութիւնը վերջացրել է ցուցահանդէսի նոր շինութիւնը, որը յարմարեցված է հրդեհի դէմ։ Առանձին ուշադրութիւն է դարձված օտար պետութիւնների բաժանմունքների վրա։ Կառուցման ժամանակ ուշադրութեան են առնվել վերջինների ցանկութիւնները։ (Հ. Գ.)

Ցէտինիէ, 13 օգոստոսի

Իտալական մամուլի ներկայացուցիչները ժուռնալիստների ընկերութեան նախագահին են ուղարկել մի խմբական բողոք աւստրիական ռազմանաւերի դէմ, որոնք սիստեմատիկաբար դժուարութիւններ են յարուցանում Մարկօնիի առաջ՝ հեռագրով հաղորդելու իտալական ամոլի Ցէտինիէ ժամանելու մասին։

Մեծ Իշխան Պետր Նիկոլաեվիչը Օգոստափառ ամուսնու հետ ներկայ էր պալատում տրված պաշտօնական հրաւիրաճաշին։ Հրաւիրվածների թւում եղել է նաև ռուսական մինիստր-րեզիդենտ Արսէնիեվը։ Ուղերձ մատուցանելու էին եկել Պետերբուրգի և Մոսկվայի սլաւօնական բարեգործական ընկերութիւնների կողմից ներկայացուցիչներ։ (Հ. Գ.)

Կենիգսբերգ, 13 օգոստոսի

Ի պատիւ Արևելեան-Պրուսիայի շրջանի համար տրված ընթրիքի ժամանակ Վիլհէլմ կայսրը մի ընդարձակ ճառ արտասանեց, մատնանշելով այն սերտ կապերը, որոնք շաղկապում են քաղաքն ու գաւառը արքայական տան հետ. նա, ի միջի այլոց, ասաց. «Այստեղ մեծ կուրֆիւրստը իրան յայտարարեց սուվերէն, դուքս Պրուսիայի. Նրա որդին արքայական թագ դրեց իր գլխին. ապրում էր մեծ զինուորը՝ ֆրանսիացիների կայսրը, որ անխղճօրէն դնում էր իր ձեռքը քաղաքի ու երկրի վրա. Վիլհէլմ I-ը կրկին անգամ դրեց պրուսական թագը, ընդգծելով դրանով՝ որ նա տրված է իրան միայն Աստուածային ողորմածութեամբ, այլ ոչ պարլամենտի կողմից, ժողովրդական ժողովներից կամ ժողովրդի կամքով, այն միտքը թէ ամբողջ ժողովուրդը պէտք է ոտքի կանգնէ և ազատէ հայրենիքը, այստեղ առաջին անգամ իրագործվեց։ Ապա կայսրը հիացմունքով բնորոշեց Թագուհի Լուիզային, նմանեցնելով նրան մարդկային կերպարանքով մի հրեշտակի. Լուիզա Թագուհին ուսուցանում է մեզ, որպէսզի տղամարդիկ դաստիարակեն իրանց մէջ ռազմական սխրագործութիւնները և ամէն ժամանակ լինէին պատրաստ սպառազինված՝ ի նկատի առնելով հարևան պետութիւնների ահագին աջողութիւնը. մեր խաղաղութիւնը հիմնված է միայն մեր զինուորական ույժի վրա։ Լուիզա Թագուհու օրինակը կանանց ուսուցանում է, որ գերմանացի կնոջ գլխաւոր նպատակը ոչ թէ ժողովներն ու միութիւնները պէտք է լինեն, այլ խաղաղ աշխատանքը տանը, ընտանիքում։ Նրանք պէտք է դաստիարակեն երիտասարդ սերունդը հնազանդութեան մէջ, ուսուցանեն, որ հարկաւոր է աշխատել միայն հայրենիքի բարօրութեան համար։ Ես նայում եմ ինձ վրա՝ իբրև մի գործիքի վրա Աստուծոյ ձեռքում և գնում եմ առաջ, առանց հաշւի առնելու վաղանցուկ հայեացքներն ու հասկացողութիւնները, իմ շաւղով, որ նուիրված է ամբողջովին հայրենիքի բարգաւաճման և խաղաղ զարգացման»։ Նրանից յետոյ կայսրը բարձրացրեց կենաց բաժակը Արևելեան Պրուսիայի առաջադիմութեան համար։ (Հ. Գ.)

Լիսաբօն, 13 օգոստոսի

Պահպանողականների յեղափոխական դիտաւորութիւնների մասին տարածված լուրերի շնորհիւ զօրքն ու նաւատորմը կանգնած են կազմ ու պատրաստ։ Խիստ ցենզուրա է սահմանված. Նախազգուշութեան միջոցներ են ձեռք առնված։ (Հ. Գ.)

Սէիստան, 13 օգոստոսի

Աւազակները յարձակվել են Հնդկաստանից եկող կարաւանի վրա։ Զօրս առաջնորդներ, որոնց թւի մէջ են երկու պարսկական զինուորներ, սպանված են, միւսները փախել են։ Աւազակներին աջողվել է տանել 25 ուղտ՝ բարձած ապրանքների հետ։ (Հ. Գ.)

Դիւրէնդ (Միչիգանի նահ.), 13 օգոս.

«Գրան-Տրենկ» երկաթուղագծի վրա ընդհարվել են երկու գնացքներ։ Սպանված են 18, վիրաւորված 20 ճանապարհորդներ։ Վագոնների կտորտանքները վառվեցին։ Կրակի մէջ այրվեցին սպանվածների դիակները։ (Հ. Գ.)

Միսուլլա (Մօնտանայի նահ.), 13 օգոս.

Ձերբակալվել են երեք մարդ, որոնք կասկածվում են անտառը հրդեհելու մէջ։ Անտառային հրդեհին զոհ գնացածների թիւը հասնում է 300-ի։ (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 11 օգոստոսի

«Թանինը» առաջարկում է Ռուսաստանին՝ չէզոք դարձնելու համար Սև-ծովը՝ հանել այնտեղից իր ռազմանաւերը։ «Թիւրքիան,—ասում է «Թանինը»,—նոյնպէս դուրս կը գայ այնտեղից ընդմիշտ»։ («Б.»)

Մոսկվա, 11 օգոստոսի

Ինքնասպանութիւն գործեց ինժեներ Ժեւլիխօվսկին, որը ծառայում էր ինտենդանտութեան մէջ։ («Б.»)

Քիշինև, 11 օգոստոսի

Տուգանքի է ենթարկվել սև-հարիւրեակային «Другъ» թերթը, խոլերայի մասին զետեղած իր մի յօդուածի համար, որով գրգռում է ազգաբնակութիւնը կառավարութեան դէմ։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԾԵՐ, ՆԵՐԿԵՐ

LIII

Գերմանական կիրկայումն եմ։

Աղօթում են։

Պարզ է, ինչպէս ամառային երեկոն։

Հասարակ, անբռնազբօսիկ է, ինչպէս անտառի մէջ հոսող վճիտ աղբիւրակը։

Երգեհոնը նուագում է սքանչելի մելօդիաներ։

Աղօթաւորները շարան-շարան նստած նստարանների վրա՝ լուռ ու մունջ կարդում են Աւետարանը։

Կարգապահութեամբ է շնչում դրսից մինչև ներսը։

Բոլորը, բոլորը եկել են և ներսն են։

Աղօթում են։

Ահա ամբիոն բարձրացաւ պաստորը. ընդհատվեց երգեհոնի նուագումը։

Եւ պաստորը կարդում է աղօթք։

Ամբողջ ժողովուրդը, ինչպէս մի մարդ, մի հոգի, շունչ՝ տեղից բարձրացաւ, վերամբարձաւ։ Մի ինչ-որ վեհ, բարձր գաղափար կապեց, միացրեց, ձուլեց այդ տարբեր հասկացողութիւնների, բնաւորութիւնների մարդկանց։

Այդտեղ կար մի լուսեղէն արծաթապատյա շղթայ, որ մարդկանց կապում, միացնում և շղթայում էր։

Դա կրօնն էր։

Եւ աղօթում էին։

Եւ կեանքն իր անթիւ մանր ու խոշոր կրքերով, ցանցերով և դաւերով լռում էր, խոնարհեցրել էր իր գլուխը մեծութեան առաջ՝ Աստուծոյ առաջ։

Եւ այդտեղ ոչ ոք չէր համարձակվում, մտածում անգամ վիրաւորել, արհամարհել ուրիշի կրօնական զգացմունքը, բիրտ մատներով դիպչել ուրիշի հոգու կլաւիշներին։

Գնացէք հայոց եկեղեցի և կը տեսնէք այնտեղ՝ հայկական ազէտ գոռոզութիւնը քիթը ցցած հեգնական ժպիտով կը ծաղրէ, կարհամարհէ այդ «խաւար ամբոխի» աղօթքը։

Իսկ ինքը։

Օ՜, նա լուսամիտ եւրոպացի է, ազատամիտ գաղափարների դաւանող և գիտութեան կաճառների բովից անցած մի հսկայական մեծութիւն։

Եւ նա սիգար կը վառէ եկեղեցում։

Եւ նա գլխարկ չի հանի այնտեղ, ուր մարդիկ մերկացնում են իրանց հոգիները։

Եւ սքանչացած էի ես կուլտուրական ազգի մեծութիւնից։

Եւ հիացած էի, ուր ներքին համոզմունքը մարդիկ գիտեն յարգել, ուրիշի սրբութիւնը ոտնատակ չը տալ, երկրպագել իրանց Աստուծուն և լինել բարձր մի կուլտուրական ազգ։

Այստեղ աղօթում են, իսկ այնտեղ՝ հայ եկեղեցում յանուն ազատութեան դանակ են քաշում իրար։

Եւ բռնակալներ են հոգու ազատութեան։

Եւ բարբարոսներ են նրանք, որ չը գիտեն յարգել ուրիշի զգացմունքը, ուրիշի աղօթքը։

Եւ աղօթում էին այնտեղ։

Այնտեղ պարզ էր, ինչպէս ամառային երեկոն։

Այնտեղ հասարակ, անբռնազբօսիկ էր, ինչպէս անտառի մէջ հոսող վճիտ աղբիւրակը։

Այնտեղ աղօթում էին։

LIV

Անցայ հայկական իրականութեան մէյդանը։

— Ժեստ,—կանչեցին ետևիցս։

Դարձայ և վրդովված կանչեցի.

— Կոպիտ վայրենիներ։

— Ջըրթ,—եղաւ ինձ պատասխան։

Եւ հայկական իրականութեան մէյդանը, որ ընդունակ է հայհոյել ձեր աղօթքը, թունաւորել ձեր համբոյրը, նա չէ խնայել և քեզ, հայ ստեղծագործութիւն, որ երկնքի, լուսնի, աստղերի մասին ես խօսում, երգում։

Շուռ տուի երեսս և անցայ ճանապարհս։

LV

Եւ անցայ հայ գրականութեան՝ մամուլի մէյդանը։

Այստեղից աղօթաւորողի ետևից նոյնպէս ժեստ են կապում։

— Ջը՛րթ,—են բղաւում, երբ շուռ էք գալիս և վրդովվում։

Այստեղ էլ նոյնն է։

Հրապարակում, հայ կեանքի բեմի վրա Համլէտին չեն երկրպագում, Օտէլլօյով չեն ոգևորվում։

Տուէք լարախաղացներ, ծաղրածու կլօուններ։ «Հայ և զուարճութիւն» է բոռում ամբոխը, և տալիս են նրան հայ և զուարճութիւն։

Ծաղրում են, հեգնում, թքում ամեն մի սրբութեան վրայ։

Ձեն աղօթում։

LVI

Օրերս ծաղրածու «Խաթաբալա» թերթը ծաղրեց, հեգնեց և աքացեց համակրանքի արժանի մի դասակարգ։

Դա հայ ուսուցչութիւնն է։

Մի դասակարգ, որ ունի իր ետևը մի սքանչելի տրադիցիա։

Մի դասակարգ, որը իր շարքերում ունի այնպիսի լուսամիտ դէմքեր, ինչպիսիքն են՝ Աբովեան, Նալբանդեան, Նազարեան, Բաստամեան, Ստեփանէ, Բահաթրեան և անհամար անցած գնացած և դեռ անցնող լուսաւոր դէմքեր։

Եւ հեգնել ինչի՞վ, ինչ մի տաղանդաւոր հայկական հանճարին վայել սրախօսութեամբ։

Համեմատելով հայ ուսուցչին կառուների հետ։

Ողորմելի սրախօսութիւն։

Եւ յիշեցի հայկական իրականութեան մէյդանը։

— Ժեստ,—կանչեցին ետևից։

— Ջըրթ,— արձագանք տուեց մի այլ տեղ։

— Հաց և զուարճութիւն,—բոռում էր ամբոխը։

Եւ հաց, զուարճութիւն են տալիս ամբոխին։ Չէ՞ որ ամբոխը իբր վարձ՝ իր ստրուկների առաջը ժամոնա է շպրտում։

«Խաթաբալա», չէ՞ որ ամբողջ հայ իրականութիւնը խաթաբալա է։

Եւ «Խաթաբալան» նրա մի ծնունդն է։

Նրա մի ճուան է։

Հա՛յ ուսուցիչ, մի՛ վրդովվիր․ գնա և աղօթիր։

Թող քո աղօթքը չը հասկանան։

Ծաղրեն... Յակովբ Գենջեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հին-Նախիջևան, 8 օգոստոսի

Հին-Նախիջևանի ս. Գէորգ եկեղեցին ունի երկու շարք խանութներ, որոնց եկամուտներով պահվում է երկդասեան երկսեռ դպրոց, որը ունի մօտ 250 սան, որոնցից աւելի քան 120-ը ձրիավարժ են, ինչպէս 1905 թւի թալանվածների և չքաւորների զաւակներ։

Այդ եկեղեցու արևելեան կողմում՝ կից ուրիշ խանութների՝ կայ ազատ տեղ ևս մի քանի խանութների։ Տեղիս վաճառական Գ. Տէր-Դանիէլեանը, ցանկանալով այդ ազատ տեղում կառուցել մի խանութ, կից շինված խանութներին, դիմել է տեղիս հոգաբարձութեանը, որը, համաձայն անցեալ տարւայ ծխ. ժողովի որոշման, թոյլատրեց Տէր-Դանիէլեանին՝ շինել այդ խանութը իր ծախսով (մօտաւորապէս ծախսվելու է 1600—1700 ր.) և չորս տարի շարունակ տարեկան տեղիս դպրոցին վճարել 25-ական ր., իսկ չորս տարուց յետոյ այդ շինութիւնը դառնում է եկեղեցապատկան և արդէն նոր պայմանով պիտի վարձով տըրվի առնուազն 500 ր. տարեկան վարձով և դրանով եկեղեցու և դպրոցի նիւթական դրութիւնը աւելի ապահովված պիտի տեսնէինք, մանաւանդ որ նոր դպրոցի շինութեան հարցը ասպարէզ է եկել, թէև դեռ ոչ մի գումար չը կայ գլուխ բերելու այդ հարցը։

Սակայն մի քանի մարդիկ՝ զանազան պատճառներից դրդված՝ այժմ դէմ են վերոյիշեալ կոմբինացիային և ամեն կերպ ջանք են թափում պղտորել մտքերը, առարկելով որ եկեղեցու առաջը փակվում է, այն-ինչ դեռ 20 սաժէն ազատ տարածութիւն կայ։

Մի րոպէ երևակայենք, որ հէնց եկեղեցու առաջը փակվում է․ բայց արդեօք ո՞րտեղ այդ երևոյթին չէք պատահի․ վերցրէք Հին-Նախիջևանից մեծ քաղաքներ՝ Ալէքսանդրօպօլը, Թիֆլիսը, Մոսկվան, Պետերբուրգը և ուրիշ շատ քաղաքներ․ ամեն տեղ էլ այդպէս է և աւելի վատ․ թողված է միայն մի դուռ՝ եկեղեցու գաւիթը մտնելու համար։

Այն անձինք, որոնք հակառակվում են յիշեալ կօմբինացիային, երևի մոռանում են, որ մեր եկեղեցին հարուստ լինելուց շատ հեռու է և նոյնիսկ իր անհրաժեշտ ծախսերը հոգալու անկարող․ Նրանք մոռանում են, որ այդ եկեղեցում պատարագիչ քահանան սաղաւարտ չունի և ուրիշ եկեղեցական զգեստների կարիք է զգացվում, որ պէտք է խաչկալը վերանորոգել, որ այդ եկեղեցին կանոնաւոր սպասաւոր տիրացուներ չունի, չունենք մենք մի այնպիսի քահանայ, որ գոնէ ամիսը մի անգամ քարոզ խօսէր եկեղեցում։ Շարունակ լսում ենք ծխականների իրաւացի և հիմնաւոր բողոքը, թէ ինչո՞ւ մեր եկեղեցին երգեցիկ խումբ չունի և այլն։ Իսկ այդ բոլորը կարգի դնելու համար հարկաւոր է միջոց, որը եկեղեցին չունի։

Այժմեան դպրոցի շէնութեան խախուտ դրութիւնը, որ մի մեծ անձրևից կարող է փուլ գալ, լուրջ ուշադրութեան է կարօտ. դասարանների մէջ եղած տախտակեայ պատնէշը խանգարում է կանոնաւոր դասերի պարապման․ դասարանների մէջ պատերը խոնաւ են և ազդում են ուսուցիչների և աշակերտների առողջութեան վրա։ Այդ բոլորը աչքի առաջ ունենալով՝ անհրաժեշտ է եկեղեցու խանութների թիւը շատացնել, և եկամուտներից մի ֆօնդ կազմել դպրոցական նոր և յարմար շէնութեան համար։ Իսկ այդ իրագործելու միակ աղբիւրն և յոյսն է յիշեալ խանութները, քանի որ մենք չենք կարող սպասել տեղիս թալանված ժողովրդից, որ նա կարողանայ իր առանց այն էլ սուղ միջոցներից խոշոր գումար յատկացնել այդ գործին։

Հաղւագիւտ մի դէպք է, որ Տէր-Դանիէլեանը արել է այդ առաջարկը տեղիս հոգաբարձութեան, որից հոգաբարձութիւնը պիտի ամեն կերպ օգտվէր և վերևում յիշված կարիքները աշխատէր հոգալ և եկեղեցու արդիւնքները աւելացնել, որպէսզի նոր դպրոցի՝ շէնքը մօտ ժամանակում կարողանային գլուխ բերել։ Յակ. Դունեայեանց

Վլադիկավկազ, 9 օգոստ.

Խոլերան մեզ մօտ վաղուց է մուտք գործել և կամաց-կամաց կատարում է իր դերը։ Քաղաքային ինքնավարութիւնը մի շարք միջոցներ է ձեռք առել խոլերայի դէմ կռուելու համար։ Կիրակի և տօն օրերը տեղի են ունենում ձրի ժողովրդական դասախօսութիւններ։

Բայց ինչպէս ամեն տեղ, նոյնպէս էլ մեզ մօտ՝ խաւար մասսան խոլերան ընդունում է իբրև Աստուծոյ պատիժ և ճակատագիր։ Նա շատ անգամ թագցնում է հիւանդներին և այդպիսով օրէ-ցօր հիւանդութիւնը լայն ծաւալ է ստանում։

Տուժողը միշտ խեղճ դասակարգն է... Նա չէ հաւատում բժշկութեանը և ընդունում է իբրև Աստուծու պատիժ։ Եւ տուժում է անվերջ։

Կիրակի օրը, ամսիս 8-ին, վաղ առաւօտեան եկեղեցիներում սկսվեց զանգահարութիւն։ Ժամը 9-ին՝ քաղաքիս բոլոր ծայրերի եկեղեցիներից քահանաները խաչով և խաչվառով դիմեցին դէպի մայր եկեղեցի։ Մայր եկեղեցու ընդարձակ բակում և շրջակայքի փողոցներում ասեղ ձգելու տեղ չը կար։

Ժամը 11 ին թափորը շարժվեց դէպի դաշտ։ Թափորի առջևից գնում էին մօտ 100 հոգի սրբերի պատկերները ձեռքներին բռնած․ անցան մօտ 22 խաչվառները, յետոյ կայսերի երգեցիկ խումբը։ Մասնակցում էին մի եպիսկոպոս, մի քանի վարդապետներ և մօտ 35 քահանայ։ Ռուսաց եկեղեցիներին միացել էին յունաց, վրաց և օսերի ուղղափառ եկեղեցիները։ Թափորին հետևում էր հազարաւոր ամբոխը։

Քաղաքից դուրս գալով, մի քանի տեղ ծունկ չոքեց ամբոխը և իր աղօթքը ուղղեց դէպի երկինք... Ամբոխի մէջ կային և արտասվողներ։ Թափորը տևեց մինչև երեկոյեան ժամը 8 ը։ Թափառական

ԱԽԱԳՆԵՐԻ ՎՐԷԺԸ

Դիլիջան, 9 օգոստոսի

Ուղիղ մի ամիս է, ինչ Դիլիջանի ամառանոցային կեանքը վրդովման մէջ է․ վրդովմունք՝ առաջացած ոչ խոլերայի վտանգից, ոչ ամարանոցների անյարմարութիւններից, կեանքի թանգութիւնից, այլ տեղական հասարակական կլուբի աւագների մի կարգադրութիւնից և վրիժառու տրամադրութիւնից, որը վերջ ի վերջոյ տրաքեց և առաջ բերեց մի շատ խոշոր սկանդալ։

Այդ սկանդալն այն աստիճան բնորոշ է իր ձևերով և տարօրինակ իր էութեամբ ու հետևանքներով, որ լռութեան մատնել այդ՝ անկարելի է, մանաւանդ որ դա բոլորում է մի հիւանդ հայ դերասանի և կուշտ մարդկանց շուրջը։

Կովկասի հասարակութեանը ոչ անյայտ դերասան Ոսկանեան բժիշկների խորհուրդով գալիս է Դիլիջան կազդուրելու իր քայքայված առողջութիւնը, բայց որովհետև առողջ լինելու համար, բացի Դիլիջանի լաւ օդից ու ջրից, դերասանը կարիք ունի նաև կերակրի, ուստի բնական է, որ նա ցանկանար իր օգտին մի ներկայացում կազմակերպել։ Ներկայացումը որոշում է տալ տեղիս նորաշէն, «հայկական» անուանված, բօտօնդայում, որը դեռ ևս զուրկ էր բեմից և բեմական անհրաժեշտ յարմարութիւններից՝ կուլիսներից, դեկորացիաներից և այլն։ Հասարակական կլուբի աւագները խնդրում են Ոսկանեանին նկարել դեկորացիաներ, սարքել բեմական համեստ յարմարութիւններ և սկսել սեզօնի առաջին ներկայացումը։ Ոսկանեանը ամեն բան պատրաստում է, անձամբ աշխատում, նկարում, տալիս է ներկայացումը և միւս օրը ստանում է աւագներից մի պաշտօնական գրութիւն, որի մէջ վերջիններս յայտնում են, որ դահլիճը արժէ 20 րուբլի, Ոսկանեանի աշխատանքը 10 րուբլի, ուստի խնդրում են մնացեալ 10 րուբլին անմիջապէս հասցնել իրանց։ Ոսկանեանը զարմանում և վրդովվում է, որ իր աշխատանքը աւագները գնահատել են այդքան չնչին, ուստի պահանջում է նրանցից անել աւելի բարեխիղճ գնահատութիւն։ Աւագները կատաղում են. ինչպէս․ ինչպէս է համարձակվում մի որևէ դերասան անբարեխիղճ անուանել իրանց այդ քայլը և... և գրում են դերասանին, որ եթէ նա իսկոյն և եթ չը ներկայացնի կլուբին հասանելիք 10 րուբլին, նրանք ոստիկանութեան միջոցով դուրս կանեն դերասանին բօտօնդայից․ այս վճռի դէմ բողոքում են աւագներից մի քանիսը, իսկ մէկը նոյնիսկ հեռանում է աւագների կազմից․ հասարակութիւնը իմանում է գործի էութիւնը և վրդովվում է. ինչ իրաւունքով 10 րուբլու քաղաքացիական վէճի համար աւագները ուզում են ենթարկել մի մարդու հասարակութեան միջից հեռացնելու խիստ և տմարդի պատժի, մի բան՝ որ չէին անի ոչ զուլուսները և ոչ էլ բուշմէնները․ և սկսվում է խլրտում․ դիմում, համոզում են աւագներին՝ թողնել այդ վճիռը անհետևանք և դիմել կամ դատարանին կամ միջնորդ դատի, բայց աւագները անողոք են․ Նրանք իրանց թքածը չեն կարող լիզել և վճռում են դուրս անել Ոսկանեանին հասարակութեան միջից... ոստիկանութեան միջոցով․ Նրան չեն տալիս մուտքի տոմսակ, իսկ իրանց անդամներից մէկին պատուիրում են, որ երբ Ոսկանեանը բօտօնդա մտնի, ոստիկանութեան միջոցով դուրս բերել նրան այդտեղից։

Հասարակութեան վրդովմունքը գնալով մեծ չափեր է ընդունում և բանը հասնում է այն տեղը, որ մի մեծ խումբ անդամների որոշում է Ոսկանեանին կլուբ տանել։ Մի շաբաթ առաջ, բազմամարդ երեկոյթներից մէկի ժամանակ, Ոսկանեանը 50—60 անդամների ուղեկցութեամբ մտնում է դահլիճ և ներկայ եղողների համակրական ծափերի տակ սկսում է և աւարտում է բալլին։ Միւս օրը նա նորից ստանում է մի գրութիւն աւագներից, որի մէջ գրում են, որ եթէ նա մտնի կլուբ, ոստիկան կը հրաւիրեն, միաժամանակ ոստիկանութիւնը յայտնում է, որ՝ համաձայն աւագների խնդրի՝ նա ստիպված կը լինի Ոսկանեանին կլուբից դուրս հանել։

Եւ ահա օգոստոսի 8-ի երեկոյեան երբ բօտօնդա էին ժողովված մի քանի հարիւր ամարանոցաւորներ և հիւրեր, դերասան Ոսկանեանը իր ամուսնու հետ բօտօնդա է մտնում․ Ներս է մտնում աւագ Սամսոն Յարութիւնեանը և ոստիկանական պրիստաւին խնդրում է դուրս բերել դերասան Ոսկանեանին։ Ողջ հասարակութիւնը էլեքտրականացած սպասում է այդ մօմենտին, և երբ պրիստաւը դուրս է կանչում Ոսկանեանին դահլիճից, բեմ է բարձրանում կլուբի անդամներից մէկը՝ Գ. Ե. և յայտնում է այդտեղից, որ Ոսկանեանի վերաբերմամբ աւագների կողմից տեղի է ունեցել մի շատ կոպիտ վերաբերմունք, ուստի առաջարկում է ներկայ եղողներին, որպէս բողոք, թողնել դահլիճը։

Հինգ րոպէի մէջ մի քանի հարիւր անձինք խորը վրդովմունքով թողնում են բօտօնդան և դուրս գալիս․ միաժամանակ կազմվում է մի յայտարարութիւն 40 հոգի անդամների ստորագրութեամբ, որով հրաւիրվում է ընդհանուր ժողով՝ քննելու աւագների այդ վերին աստիճանի տգեղ և նմանը չը տեսնված քայլը։

Ցաւալի է արձանագրել, որ աւագների կազմի մէջ են գտնվում երդուեալ-հաւատարմատար Սամսոն Յարութիւնեանի, ինժեներ Գ. Եարալեանի, ուսուցիչ Հ. Խուդաբաշեանի նման ինտելիգենտ համարվող և հասարակական որոշ դիրք վայելող անձեր, որոնք իրանց որոշումով ոտնատակ են տալիս ոչ միայն տարրական արդարութեան սկզբունքը, այլ անարդար կուիւ են մղում մի հայ հիւանդ դերասանի վերաբերմամբ, լցված լինելով մանր քէնի և արբեցած ինքնասիրութեան թոյնով։

Ըստ երևոյթին, այս միջնադէպը չէ անցնելու առանց ծանր հետևանքների․ Նայած հասարակութեան մեծ մասի տրամադրութեանը, գործը բարդանալու է և առաջ է բերելու մի շարք նոր անախորժութիւններ տեղիս ամարանոցաւորների անդորր կեանքի մէջ։

Մանրամասնութիւնները, որքան նրանք կը կրեն հասարակական բարքերի պարզաբանութեան կերպարանք, կը հաղորդեմ ընթերցողներին։ Այցելու

ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Բագու, 9 օգոստոսի

Վերջին 3—4 օրը տեղիս եղանակները սկսել են փոխվել, իսկ այսօր մի փոքր անձրև տեղաց, որը բաւական զովացրեց եղանակները, գոնէ Բագուի հռչակաւոր փոշին ծածկվեց։

Խոլերան էլ կարծես մտադիր է ձեռք քաշել մեր խախից։ Ընթերցողը թող չը կարծէ, որ ձեռք առնված միջոցների շնորհիւ է հեռանում մեզանից, ոչ, այլ, ինչպէս բըժիշկներն են ասում, բացիլները խիստ թոյլ նշաններ են ցոյց տալիս։ Վերջին օրերումս հիւանդացողների թիւը 25—30-ից դէնը չէր անցնում, իսկ երէկ միայն 12 հոգի են հիւանդացել, և հաւանական է, որ այդ՝ անձրևի շնորհիւ աւելի պակասի։

Սկիզբներում հիւանդացածների մեծ մասն էր մահանում, սակայն ներկայումս մահացողները փոքրամասնութիւն են կազմում, իսկ առողջացածները մեծամասնութիւն։

Ուշագրաւը այն է, որ առաջին անգամ, երբ այդ անկոչ հիւրը իր հունձը սկսեց՝ մանգաղը ուղղեց հայերի և ռուսների վրա, բայց վերջերս անցաւ դէպի թուրքերը։ Եթէ տեղիս թերթերին լաւ ուշադրութիւն դարձնենք, կը տեսնենք, որ ամբողջ մի ամիս 90%-ը հայերից, ռուսներից, վրացիներից և հրէաներից էր հիւանդանում, 10% թուրքերից։ Այդ երևոյթը պարզվում է նրանով, որ այս անգամ խոլերան եկաւ Ռուսաստանից, իսկ Ռուսաստանից դէպի Բագու մուտք ունեցողները առաջին իսկ քայլում շփվում են քրիստոնեաների հետ, իսկ վերջիններս անմիջական կապ ունեն, ինչպէս տեղացիներ, թուրքերի հետ։ Սակայն պիտի խոստովանած, որ վերջին օրերս, երբ քրիստոնեաները մի բազմաշարք զոհեր տալուց յետոյ վերջապէս հասկացան, որ խոլերան ոչ Սաղմոս է ճանաչում, ոչ Նարեկ և ոչ զանազան սրբերի, նահատակների միջնորդութիւններ, ուստի և սկսեցին լուրջ քննել ու հակախոլերային դիրք բռնել, այսինքն առողջապահական միջոցներ դիմել։ Միւս կողմից արդէն թուրքերի մէջ մուտք գործելով սկսեց հիւանդների թիւը բազմացնել։

Ցանկալի է, որ մեր հարևան թուրքերը աշխատէին օր առաջ արմատական միջոցների դիմելով հալածել ինքնակոչ հիւրին իրանց միջից։ Թող մենք նրանց օրինակ ծառայենք։ Մենք՝ այդ կուլտուրական կոչված անկուլտուր հայերս ոչ մի հաւատ չընծայեցինք գիտութեան, բժշկութեան, և մեր հիւանդներին թագցնելով զոհեր տուինք, բայց և վերջը հասկացանք մեր սխալ ու դատապարտելի քայլը։ Գոնէ իրանք առանց զոհերի գիտութեան միջոց-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԾ ՄԱՐԴԸ

(Էսքիզ)

Գր. Ջանշեանի յիշատակին, մահվան տասնամեակի առիթով։

190... թ. ամառն էր։

Ես նշանակված էի հայ ժողովրդի հոգևոր պէտքերը կատարելու համար՝ Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը։

Սովորական պարապ օրերից մէկն էր, երբ նստած եկեղեցու բակում լրագիր էի կարդում։

Ներս մտաւ եկեղեցու բակը մի սևաչեայ երիտասարդ, փոքրիկ՝ նոր ծլող բեխերով, մաքուր հագնված և ձեռնափայտը ձեռին։

Նա ամենայն քաղաքավարութեամբ մօտեցաւ ինձ, ձեռը մեկնեց՝ բարևեց և ինչ-որ ազգանուն փնթփնթաց։

Ես աթոռ առաջարկեցի։

— Տէր հայր,—ասաց երիտասարդը,— կարելի՞ է ձեզ մի նեղութիւն պատճառել, գալ ինձ հետ հէնց այժմ այստեղի գերեզմանատունը և այնտեղ հոգեհանգիստ կատարել...

— Ինչո՞ւ չէ, ուրախութեամբ,—ասացի ես։

Երիտասարդը հանեց ծոցից ժամացոյցը և նայեց․ ուղիղ կէսօրվայ 11 ժամն էր...

— Ժամանակս շատ սուղ է, ես շտապում եմ։

— Հէնց այս րոպէիս,—ասացի ես և վեր կացայ տեղիցս։

Նա խօսում էր մաքուր հայերէն լեզուով․ ձևերը և շարժումները չափված էին․ ինտելիգենտ մարդու տպաւորութիւն էր թողնում...

Մենք կառք նստեցինք և մի քառորդ ժամից յետոյ հասանք գերեզմանատուն։

Ես սպասում էի, որ նա ինձ կը տանէր մի որևէ գերեզմանի մօտ և՝ ցոյց տալով այդ գերեզմանը՝ կը խնդրէր նրա վրա կատարել հոգեհանգիստը...

Բայց զարմանքս մեծ եղաւ, երբ նա տարաւ ինձ մի բոլորովին տափարակ տեղ, որտեղ ոչ մի մարդ չէր թաղված, և խնդրեց այդ ազատ տեղում կատարել։

Ես համաձայնվեցի։

Երբ սկսեցի աղօթել, երիտասարդը ծունկ չոգեց և գլուխը խոնարհեցրած մնաց մինչև աղօթքի վերջը։

Ես վերջացրի։

Նա մօտեցաւ, համբուրեց խաչը, շնորհակալութիւն յայտնեց և ուզում էր գնալ։

Չափազանց հետաքրքրվել էի նրա անձնաւորութիւնով։

— Երևի ծնողներ կամ ազգականներ ունէք թաղված այս կողմերում.—չը համբերեցի ես։

Երիտասարդը կանգնեց․ մտածկոտ դէմքով գլուխը իջեցրեց և ձեռնափայտով ըսկըսեց գետնի վրա գծեր նկարել։

— Ո՛չ, տէր-հա՛յր, ես ծնողներ չունեմ այս կողմերում թաղված․ աւելին կասեմ․ մինչև անգամ բոլորովին էլ չը գիտեմ, թէ ո՞րտեղ են նրանք թաղված․ ես ծնողներ չեմ տեսել․ Նրանք անյայտացել են հայկական կոտորածների ժամանակ․ մեծացել և խնամվել եմ ուրիշների, բարի մարդկանց շնորհիւ...

— Ա՜, ուրեմն, դուք որբ էք...

— Այո՛, ես Թիւրքիայի որբերից եմ․ մեծացել եմ որբանոցում․ յետոյ՝ ուսում ստանալով կարողացայ ճանաչել մեր, որբերիս բարերարին, մեզ համար մտածող այն մեծ մարդուն, որի հոգու փրկութեան համար մենք այժմ ձեզ հետ միասին աղօթեցինք... Անշուշտ լսած կը լինէք այդ մեծ ժողովրդական անունը՝ Գրիգոր Ջանշեան...

— Գրիգոր Ջանշեա՞ն, — մեքենայաբար դուրս թռաւ բերանիցս։

— Այո՛, Գրիգոր Ջանշեան. չափահաս դառնալուց և ուսումս վերջացնելուց յետոյ՝ երբ ես ճանաչեցի այդ անունը, իմ մէջ՝ այդ մարդուն տեսնելու մի անզուսպ ցանկութիւն առաջ եկաւ... Հանգամանքների շնորհիւ ես անցայ Ռուսաստան, եկայ Մոսկվա, բայց, դժբաղդաբար, իրան տեսնելու տեղ՝ ինձ ցոյց տուին նրա սառը հողաթումբը... Այժմ ես ծառայում եմ Ռուսաստանում և ահա մի քանի տարի է, որ գալիս եմ տօնավաճառ, և այստեղից անպատճառ անցնում եմ Մոսկվա, համբուրում եմ նրա գերեզմանը և գնում... Բայց այս տարի անակնկալ հեռագիր ստանալով՝ շտապում եմ պաշտօնատեղիս․ ահա և այդ պատճառով ձեզ այդ նեղութիւնը պատճառեցի...

Նա նորից հանեց ժամացոյցը, նայեց և ձեռքս սեղմելով շտապով հեռացաւ։

Ես անշարժ կանգնած մնացի։

Ուշադրութեամբ լսելուց, կարծես, քար էի կտրվել։

Մի քանի վայրկեան այդ դրութեան մէջ մնալուց յետոյ՝ ես քայլերս ուղղեցի դէպի տուն, մտածելով թէ քանի՜-քանի՜ հարիւրաւոր այդպիսի բերաններ են օրհնում այդ մեծ մարդու բարի յիշատակը...

Ս. քահ. Ասլանեան

Աստրախան

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

I

ՀՈԳՍԵՐ

Չը խօսենք իմ հոգսերի մասին․ Նրանք շատ են որպէս աղբիւրի կայլակներ, և աւելի շատ, քան նարգիսի թերթիկները հովերի առաջ մեղմիկ օրօրվելիս։

Եւ իմ հոգու մէջ նրանք իրանց գերեզմանը ունեն դրած, որին զարդարել են վառ ծաղիկներով ցողի հետ, ու պարուրել ծխածանով՝ մատաղ հոգիներին վախ չազդելու համար։

Նրանք անթիւ են, իմ հոգսերը, և երբ մարգերի վրա շրջելիս մի յոգնած հոգու պատահէք երկնակամարով զբաղված, իմացէք, որ նրա մէջ իմ հոգսերից մի՛ կաթիլ կայ, որ աշխատում է անսահմանութեան մէջ պարուրել իր վիշտը։

Ու յորդացած անձրևների պէս նրանք թափվում են, իմ հոգսերը, թրջում ճանապարհների եզրին բսած ծաղիկները, ու գընում ապրում բանուորների մէջ՝ քոյր հոգիների մօտ։

Չը խօսենք իմ հոգսերի մասին, այլ կափարիչով ծածկենք և թողնենք, որ քնեն. Նրանք արևից զուրկ շուշաններ են, որ այնպէս խորհրդաւոր են դառնում, երբ մարդիկ մօտենում են նրանց։

Թողնենք․ և էլ չը խօսենք իմ հոգսերի մասին․ Նրանք շատ են որպէս ծովի աւազը, և աւելի շատ, քան երկնակամարի աստղերը։

Չը խօսենք նրանց մասին...

II

ԲԱՆՈՒՈՐՆԵՐ

Յաղթ քայլուածքով նրանք գնում էին խմբովին՝ որպէս ստեղծագործութիւնը, և երկիրը դողում էր նրանց ոտքերի տակ՝ ինչպէս իմ սիրտը պատահարի առաջ սարսափը դիտելիս։

Եւ նրանք կոշտ էին ու կոպիտ՝ որպէս բոլոր աշխատաւորները, և նրանց ճակատից քրտինքը կաթիլ-կաթիլ ծորում էր, որպէս զի թացացնի երկիրը վաղվայ հացաբոյսերի համար։

Ու երբ դէպի գործը տանող մեծ ճանապարհից անցնում էին, ես մօտեցայ ու ասացի նրանց․

— Ընկերներ, ես մի եղբայր ունեմ, որը շատ վաղուց թողել է հայրենական տունը և ձեր շարքերում տեղ գտել ապրելու համար, և եթէ ճանաչում էք նրան, ասացէք նրա տեղը, որովհետև մայրս հոգեվարքի մէջ նրան է սպասում անհամբեր։

Եւ երբ ուշադրութեամբ լսեցին ինձ, բոլորն էլ միևնոյն թախիծով կանգ առան և սկսեցին խորհել իմ եղբօր մասին, այո՛, և իմ մօր։

Ու նրանք խմբովին ասացին․

— Մենք չը գիտենք նրան, անմեղ հոգի, և ի զուր դու նրան մեր շարքերում ես փնտռում...

Բայց այդ միջոցին մէկը առաջացաւ նըրանց խմբից՝ յաղթանդամ և տարիքաւոր, որպէս մեր անտառի կաղնին, և անկեղծ ու սիրալիր փայփայեց իմ գլուխը։

Եւ նա խօսեց մի ձայնով, որ մեր աղբիւրի զնգոցն էր յիշեցնում, և որ այնպէս պարուրել էր նրան թախիծը։

Ու նա ասաց․

— Նայիր ինձ, իմ աչքերին...

Ու ես նայեցի նրան ճիշդ այնպէս, ինչպէս հայրենի կտրից լուսնին են նայում մեր գիւղի մանուկները։

Եւ ես ասացի․

— Ձեր աչքերի մէջ իմ մօր թախիծը կայ, և եթէ դուք էք իմ եղբայրը, ապա համբուրեցէք ինձ այնպէս, ինչպէս կը համբուրէին իրար հարազատները։

Ու նա կռացաւ և լուռ ու անձայն համբուրեց ինձ այնքան պինդ, որ ես ակամայ մօրս յիշեցի գիւղից ինձ ճանապարհ դնելիս։

Եւ նրա համբոյրը այնքան տաք էր, որ դեռ այժմ էլ զգում եմ նրա հետքը այտիս վրա արցունքի հետ։

Ու եթէ աշխատանքով ընկած ես էլ կը մոռանամ մայրիկիս, ապա նրան ասացէք, որ միայն մի բանով կարող է ճանաչել ինձ —այտիս վրա եղբօրս թողած փոքրիկ նըշանով...

Ա. Ջանեան

ներով հալածեն։ Այլապէս նորից կարող է ընդհանուր ցաւ դառնալ, և ինչպէս Պետերբուրգում ձմեռն անգամ զոհեր է տանում, նոյնը կը լինի և Կովկասում, որի հետ կապված է Բագուն։

Քաղաքային վարչութեան մասին մի քանի խօսք ևս։ Հարիւրաւոր զոհեր տալուց յետոյ, վերջապէս քաղաքը վճռեց մի «կուբ» գնել և ձրի թէյ բաժանել քաղաքի աղքատ դասակարգին—բանւորին, մշակին, որոնք ջրի փոխարէն թէյ պիտի խմէին։ Այդ քայլը մեծ զոհողութիւն էր մեր քաղաքի հայրերի կողմից, որ նրանք 27.000,000 ռուբլուց 1—2 հարիւր ռուբլի ծախսեցին, սակայն 25 ր. էլ տուին մի պահապանի, որ հսկէր այդ թէյատան վրա, և մի քանի օրից յետոյ այդ «կուբը»՝ հեշտաբար քաղաքի հրապարակից գողացան։

Դա մասամբ ցոյց է տալիս քաղաքի ղեկավարների հոգատարութեան պատկերը և մասամբ էլ քաղաքի բնակիչների բարոյական աստիճանը։ Եւ այդքանով էլ կարելի է շատ պարզ գաղափար կազմել Բագուի բնակիչների ինչ էլեմենտ լինելու մասին։

Բայց մի՞թէ այդ է միայն։

Խօլերային հիւանդանոցի (բարակ) ֆէլդշէրներից մէկը հիւանդանում է խօլերայով։ Նա անմիջապէս փորը բռնած հիւանդանոցից փախչում է իր բնակարանը։ Անցնում է 1—2 օր, նա նորից վերադառնում է իր պաշտօնին։ Այդ երևոյթը խիստ վատ տպաւորութիւն գործեց առանց այն էլ բժշկութեան վրա կասկածով նայող կիսավայրենի ասիացիներիս վրա։ Ահա թէ ինչպէս. երբ մէկը հիւանդանում է և նկատում է խօլերային նշաններ, նա խորհուրդ է ստանում իր շրջապատող գիտակիցներից դիմել հիւանդանոց և այլն, սակայն նոյն հիւանդանոցում ծառայողը հիւանդանալու դէպքում խոյս է տալիս հիւանդանոցից։ Արդ, ինչպէս հասկանալ... Հասարակութիւնը իրաւունք չունի՞ բացատրութիւն պահանջելու տուն փախած և տանը բժշկված խօլերայով վարակվող՝ հիւանդանոցում ծառայողից։ Սակայն հասարակութիւնը ինչպէս պահանջի... Ցո՞յց սարքէ... Լրագիրներում գրվեց այդ առիթով, բայց քաղաքային վարչութիւնը, որը ձայն է ամբողջ քաղաքի, պաշտօնապէս լռութիւն պահպանեց և ոչ մի բացատրութիւն չը տուեց, որպէսզի առանց այն էլ հաւատը կորցրած բնակիչները պարզ իրողութեան հետ ծանօթանան։

Փողոցի մէջ, անցեալ օրը, մրսելուց թէ չը գիտեմ ինչից՝ սիրտ է թափում մի քաղաքացի։ Ոստիկանութիւնը իսկոյն նստեցնելով կառք՝ հասցնում է հիւանդանոց, կարծելով որ խօլերա է։ Հիւանդանոցում դրան ընդունում են և տանում մի փոքրիկ սենեակ (կարծեմ վաննա ունեցող). հիւանդ կարծեցեալը 5—6 ժամ սպասում է, բայց ոչ ոք չէ այցելում իրան, փորձում է դուռը բացել և իր գոյութեան մասին յիշեցնել, սակայն դուռը ետևից փակ է գտնում։ Սկսում է ծեծել. մօտենում է մի ֆէլդշէր, որը, առանց դուռը բացելու, յայտնում է, որ շուտով կը տեսնվեն։ Սպասում է մի քանի ժամ ևս, ոչ ոք չը կայ դուռը բացող. նորից ծեծում է և, բարեբաղդաբար, այս անգամ մօտենում է դռանը՝ ծառայողներից մէկը (ստօրօժ) և դուռը բացելով հարց է տալիս հիւանդին, բայց վերջինս, առանց ժամանակ կորցնելու, մի ակնթարթ դուրս է պրծնում և կառք նստելով փախչում տուն։ Նա փոշիացրած սև պղպեղով մի բաժակ օղի է խմում և պառկում է քրտնելու, և քնում է։ Անցնում է մի քանի ժամ՝ գալիս են բնակարանը*) ախտահանելու և գտնում են պառկած տանտիրոջ, որը արթնանալով յայտնում է, որ իր հիւանդութիւնը թիւրիմացութիւն է եղել և ինքն իրան այժմ բոլորովին առողջ է զգում. սակայն պարոնայք ֆէլդշէրները ստիպում են նրան նորից տանել հիւանդանոց, որը սակայն չէ աջողվում։

Ահա այս և սոյնման անզգոյշ արարքութիւնները միանգամայն վարկաբեկում են գիտութիւնը, և այդպիսի վտանգաւոր ժամանակներում հասարակութիւնը խոյս է տալիս իսկական բժշկութիւնից։

Քաղ. վարչութեան անդամները—եթէ իսկապէս նրանք ընտրված են քաղաքից՝ նրա բնակիչների օգտին, շահերին ծառայելու—օրապահի դեր պիտի կատարեն հիւանդանոցում, հսկեն, մխիթարեն ներս մտնող հիւանդին և ոչ թէ այն աստիճանի անտարբեր գտնվեն, որ իւրաքանչիւր ծառայող իր քէֆի համապատասխան և անտարբերութեամբ վարվի։

Բաւական չէ փող ունեցողին քաղ. վարչութեան անդամ ընտրել, այլ ոսկիների հետ էլ փոքր-ինչ խելք և բարեխղճութիւն է հարկաւոր. իսկ Բագուն, ըստ փաստերի, փողի քաղաք է, այլ ոչ մարդու։

Այդպէս է մեր իրականութիւնը։

Ս. Գարագաշ

---

*) Հիւանդը երբ հիւանդանոց է մտնում, առաջին անգամ հարցնում են բնակարանի տեղը, հասցէն։ Ս. Գ.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՉԱԿ. ԿՈՒՐՍԵՐԸ ԵՒ ԷԿՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԸ

Մոսկվա, 5 օգոստոսի

Վերջացան ուսուցչ. կուրսերը և ուսուցիչները ցրվեցին իրանց տեղերը։ Ֆինլանդիա գնացող ուսուցիչները վերադարձան և այս օրերս նոյնպէս ուղևորվեցին իրանց պաշտօնատեղերը։

Մայրաքաղաքի թերթերում լոյս տեսած այն լուրը, իբր թէ ուսուցչական կուրսերը և էկսկուրսիաները վերջացան ուսուցիչ Անդրէևսկիի եղեռնական մահով, սխալ է։

Յուլիսի 24-ին Իմատրայի ջրերում իր կեանքին վերջ դնող Անդրէևսկի ազգանունով երիտասարդը ուսուցիչ չէր, այլ ուսանող (Պօլտաւայի նահանգից), որը, ինչպէս պարզվեց հանգամանքներից, նախապէս որոշված դիտաւորութեամբ ուղղակի եկել էր Իմատրա իր կեանքին վերջ դնելու։

Պէտք է ասել, որ Իմատրայի մէջ նետվելու սա առաջին դէպքը չէ։ Ասում են, որ վերջին ժամանակներս սովորական է դառել այն երևոյթը, երբ հեռու տեղերից մարդիկ դիտմամբ գալիս են այստեղ կատաղի ալիքների մէջ անհետանալու։ Թողնելով առայժմ Ֆինլանդիայում կատարած էկսկուրսիաների նկարագրութիւնը, ընդհանրապէս էլի մի քանի խօսք կասեմ կուրսերի մասին*)։

Զուտ գիտական դասախօսութիւնները անցնում էին թէև հետաքրքրական, բայց վիճաբանութիւնների նիւթ չէին տալիս. այլ էին մանկավարժական դասախօսութիւնները, երբ հրատապ շատ հարցեր ստիպում էին ուսուցիչներին վերջապէս բռնկվել ու արտայայտել այն բոլոր մտքերն ու զգացմունքները, որոնք տարիներ շարունակ ամենքի սիրտը ճնշել էին։ Յանձնաժողովը դիմել էր քաղաքապետին և խնդրել էր թոյլտւութիւն, որպէսզի ուսուցիչներից մի մասնաժողով կազմվի՝ քննութեան ենթարկված մանկավարժական հարցերը ամփոփելու և արձանագրութիւն կազմելու համար, սակայն յանձնաժողովի այդ խնդիրքը չը յարգվեց։ Կուրսերի ամբողջ ընթացքում որոշ դասախօսութիւններին ներկայ էր լինում ոստիկանութեան ներկայացուցիչը. վերջին օրերը ներկայ էին լինում մինչև անգամ մի քանի ոստիկաններ։ Այնուամենայնիւ կուրսերը վերջացան առանց խլըրտումների, և ուսուցիչները, որոշ գաղափարներով ներշնչված, գոհ սրտով հեռացան իրանց տեղերը, նոր ոյժով, նոր եռանդով լուսաւորութիւն տարածելու։

Յար. Խաչատրեան

---

*) Տես «Մշակ» № 140.

ԽՕԼԵՐԱ

◆ Բիւլլետեն.—Օգոստ. 13-ի առ. ժամը 9-ից մինչև օգոստ. 14-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խօլերայով հիւանդացել է 1 հոգի։ Հիւանդանոցում կային 28 հոգի, աւելացել է 1, առողջացել և դուրս են եկել 6, մեռել է 1, ներկայումս կան 22 հոգի։

◆ Օգոստոսի 13-ին Թիֆլիսում խօլերային նշաններով հիւանդացել են և ուղարկվել բարակները. 1) Ախալցիխսկայա փող. № 10 տանը՝ բանւոր Անդրէյ Ուստինովիչ Նովիցկի, 30 տար.։ 2) Օրթաճալայի «Ալազան» այգում՝ Զախարի Իրուբիձէ, 50 տար., որը մեռել է։ 3) Պետրօվսկայա փող. № 48 տանը՝ Սօլոմէա Վասիլիէվնա Սամոսարաձէ, 50 տար., բժշկվում է տանը։ 4) Կօնստանտինօվսկայա փող. № 12 տանը՝ Թիֆլիսեցի Արշակ Ոսկանովիչ, 6 տար.։ 5) Երկաթուղային կացարաններում՝ ֆէլդշէր Կազիմիր Վայերը, որը ուղարկված է երկաթուղային հիւանդանոց։

Զինւորական հիւանդանոցի գլխաւոր բժշկի տուած տեղեկութեամբ զինւորական հիւանդանոցն է ուղարկված Թիֆլիսի արտիլէրիական պահեստի վերակացու Եփրեմ Եսեպէնկօ։ Հիւանդացողների տները ախտահանութեան են ենթարկված։

—

13 օգոստոսի

Պետերբուրգ.— Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացել են 52 հոգի, մեռել՝ 30, բժշկվում են՝ 686։

Պետերբուրգ. — Գործակալութիւնը խօլերայի ընթացքի մասին հետևեալ տեղեկութիւններն է ստացել. մի շաբաթվայ ընթացքում Իշենսկի գաւառում հիւանդացել են 9, մեռ. 4 հոգի։ Եարօսլաւլում հիւանդացել են 37, մեռ. 23, գաւառում հիւ. 47, մեռ. 29։ Մոսկվայում մի օրվայ ընթացքում հիւ. 2, մեռ. 1. Կրօնշտադում հիւ. 6, մեռ. 4 հոգի։

Հռոմ.—Մինիստրների խորհուրդը յատկացրեց 900,000 լիրա խօլերայով բռնկված շրջանների ազգաբնակութեանը նպաստ բաժանելու համար։

Հռոմ.— Բարալէտում խօլերային 15 դէպք է եղել, 8 մարդ մեռել է։ Ապուլիայի ուրիշ տեղերում հիւանդացել են 14, մեռել 6 հոգի։

Վիեննա.—Ներքին գործերի մինիստրութեան սանիտարական դեպարտամենտը հաղորդում է, որ բակտերիօլօգիական հետազօտութիւնը հաստատել է ասիական խօլերայի 2 դէպք, որոնցից մէկը՝ նորերս վախճանված մի տիկին է և մէկն էլ ազախինը, որ այժմս բժշկվում է։ Նախազգուշութեան ընդարձակ միջոցներ են ձեռք առնված։

Վիեննա.—Միջտեսչական խորհրդակցութիւնը ընդունեց խօլերայի դէմ ձեռք առնված միջոցները բաւարար։

Թեհրան.—Էնզելիում խօլերա երևալու պատճառով 5-օրեայ կարանտին է սահմանվել Ռուդբարում։

Օդեսսա.—Ժանտախտի դէմ կռւելու համար [illegible] է Օդեսսայում գլխաւոր բժշկական տեսուչ Մալինսկին։

Կահիրէ.—Մինիստրների խորհուրդը որոշել է Ռուսաստանից և Իտալիայից եկող ճանապարհորդներին կարանտինի ենթարկել։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» հետևեալ համարը, վաղվայ տօնի պատճառով, լոյս կը տեսնի չորեքշաբթի, օգոստոսի 18-ին։

◆ Երէկ Սօչիից Թիֆլիս ժամանեց Վրաստանի էկզարխը։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կրկին անգամ հրաւիրեց ոստիկանութեանը լուրջ հսկողութիւն ունենալ և արգելել ազգաբնակութեանը լողանալու Կուր գետում։

◆ «Зак.» լրագրի ասելով, լուր կայ, որ Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզէնը թողնում է իր պաշտօնը։ Նրա տեղ նշանակվելու է Թիֆլիսի փոխ-նահանգապետ Չերնեավսկին, իսկ փոխ-նահանգապետ Երևանի նահանգի՝ Թիֆլիսի ոստիկանապետ գնդապետ Զասիպկինը։

◆ «Մշակի» երէկվայ համարում մենք հաղորդել էինք Բագւում գտնված մի դիակի մասին, որի գլուխը յայտնի չէր թէ ինչ էին արել։ Այժմ, «Баку» լրագրի ասելով, օգոստոսի 10-ին տեղական ոստիկանութիւնը հայկական սպանդանոցից այն կողմ, դիակի ընկած տեղից քիչ հեռու, գտել է նաև սպանվածի գլուխը։ Այնտեղ ընկած է եղել, ի միջի այլոց, և մի մշտական անցագիր՝ Ակոբջան Արութիւնովիչ Մեսրոպով անունով, 50 տարեկան, Զանգեզուր գաւառի Ատտարախ գիւղի բնակիչ։ Թէ ով և ինչ նպատակով է կատարել այդ սպանութիւնը՝ ոստիկանութիւնը դեռ ևս չէ կարողացել պարզել։

◆ Մեզ հաղորդում են, որ ամառային դասընթացքները, որոնք բացված են Մեծ-Ղարաքիլիսա գիւղում, աւարտեցին իրանց շրջանը։ Դասընթացքները կազմակերպված էին աւելի ընդարձակ ծրագրով, քան նախկին տարիները։ Առանձին ուշադրութիւն էր դարձված թէ տեսական և թէ գործնական պարապմունքների վրա։ Ունկնդիրների թւում կային թէ գիւղացիներ և թէ դպրոցական ուսուցիչներ զանազան ազգերից։ Ուսանում էին նաև երկու թիւրքահայ, որոնք սակայն փոքր ինչ ուշ էին կարողացել գալ դասընթացքներին։

◆ Ուսանողներից կազմված մի արշաւախումբ ուղևորվեց դէպի Անի։ Պրօֆեսոր Մառրը, որ գտնվում է Անիում, կը կարդայ նրանց համար յատուկ բացատրական մի դասախօսութիւն և ցոյց կը տայ աւերակների հետաքրքրական կողմերը։ Անիից ուսանողները կուղևորվեն Էջմիածին։

◆ Թիֆլիսի փողոցներում մեծ թւով երևում են ամարանոցներից վերադարձողներ։ Կան նաև օտարազգի հիւրեր, եկած զանազան տեղերից՝ հանքային ջրերից, հիւսիսից և արտասահմանից։

◆ Ժանտախտի համաճարակի դէմ միջոցներ ձեռք առնելու և կռիւ մղելու համար Բարձրագոյն հրամանով հաստատված յանձնաժողովը թոյլատրել է ժողովրդական առողջապահութեան մասին հոգացող պետական և հասարակական հաստատութիւններին նոր բացվող բժշկական պաշտօններում նշանակել նաև արտասահմանեան այն բժիշկներին, որոնք կը ներկայացնեն վկայական այնտեղի պետական քննութիւնը բռնելու կամ հիւանդանոցներում երկու տարի բժշկական պաշտօն վարելու մասին։ Ամեն մի այդպիսի դէպքում պէտք է միայն նախապէս բանակցել տեղական նահանգական բժշկական վարչութեան տեսչի հետ։

◆ Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան սրահում օգոստոսի 12-ին կայացել է նոյն Ընկերութեան խորհրդի նիստը, ուր քննութեան է ենթարկվել պտղաբուծութեան ցուցահանդէսի հարցը, որը մտադրութիւն կար կազմակերպել առաջիկայ սեպտեմբերին։ Գիւղատնտեսներից շատերը, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ շատ տեղերում պտուղները կարկտահար են եղել ու փչացել այնպէս, որ նրանք ոչ միայն անպէտք են ցուցահանդէսի համար, այլ և շուկայի, առաջարկել են յետաձգել։ Ահա այդ դիտումներով էլ որոշված է մրգաբուծութեան ցուցահանդէսը թողնել յաջորդ տարվան։ Ապա Ընկերութեան քարտուղար «Кавк. Хозяйство» թերթի խմբագիր Ս. Պ. Էյրամովի հիւանդութեան պատճառով խորհուրդը որոշել է քարտուղարական պարտականութիւնները դնել Ի. Իսզրաշեանի վրա, իսկ խմբագրի պաշտօնը ագրօնոմ Ա. Ս. Փիրալեանի վրա։

◆ Թիֆլիսի հրդեհաշէջների գլխաւոր Կալմըկօվը միջնորդութիւն է յարուցել քաղաքային վարչութեան առաջ, խնդրելով որ այն դէպքերում, երբ քաղաքում լուրջ հրդեհներ են պատահում և որոնց հանգցնելու համար շատ ժամանակ է պահանջվում, մանաւանդ եթէ ջրանցքի կրանները հրդեհի տեղից շատ հեռու են գտնվում, քաղաքային ջրցան սայլերը օգնութեան հասնեն հրդեհաշէջներին, որպէսզի նրանք հնարաւորութիւն ունենան անընդհատ աշխատելու հրդեհը հանգցնելու համար։ Քաղաքային վարչութիւնը, յարգելով այդ միջնորդութիւնը, համապատասխան կարգադրութիւն է արել առաջարկելով փողոցները ջրող կապալառուին բրանդմէյստերի պահանջով 10 տակառակիր սայլեր դնել նրա տրամադրութեան ներքոյ հրդեհի տեղը ջուր կրելու համար։

◆ Քաղաքային զինւորակոչական ատեանը օգոստոսի 13-ին ներկայացրել է Թիֆլիսի նահանգապետին առաջիկայ աշնանը զինւորակոչութեան ենթարկվողների ցուցակը։ Դրանից երևում է, որ այս տարի զինւորական վիճակահանութեան են կանչվում 559 հոգի, որոնցից 83-ը տեղացիներ են։ Զինւորակոչութեան ենթարկվողներից 148 հոգի արտօնեալ դասին են պատկանում։ Առաջին կարգի արտօնութիւն ունեցողները՝ 119 հոգի, որոնցից 48 ը տեղացիներ են՝ 2-րդ կարգինը՝ 27 (տեղացիները՝ 14) և 3-րդ կարգինը՝ 1։ Ցուցակի մէջ մտնողներից 533-ը քրիստոնեաներ են, հրէաներ՝ 9, մահմեդականներ՝ 3 և սեկտանտներ՝ 14։

◆ Թիֆլիսի պետական դպրոցներում ընդունելութեան քննութիւնները նշանակված են օգոստոս ամսում հետևեալ օրերը. տղայոց I գիմնազիայում՝ օգոստոսի 23-ին և 24-ին. II գիմնազիայում՝ 21-ին և 23 ին. III-ում՝ 21-ին. IV-ում՝ 25—27-ը. V-ում՝ (Հավլաբարի) 25-ին։ Օրիորդաց գիմնազիաներում—II-ում՝ 24-ին և 27-ին. III-ում՝ 26-ին, 27-ին և 28-ին. IV ում՝ 26-ին և 27-ին։ Ռէալական դպրոցում՝ 21-ին և 23-ին։ Մանթաշեանի առևտրական դպրոցում՝ 26-ին, 27-ին և 28-ին, Քաղաքային արհեստաւորաց դպրոցում՝ 26-ին և 27-ին։

◆ Կառավարութեան հրամանով փակվել է Ս. Պետերբուրգի հասարակական գրադարանը, որը պարունակում է 30,000 գիրք և ունի 3,000 անդամ։ Գրադարանում կատարված խուզարկութիւնը այն արդիւնքը ցոյց տուեց, որ ոչ մի հիմք չը կայ գրադարանը փակելու համար։

◆ Խարկօվում փակվել են ժողովրդական դպրոցների ուսուցիչների համար բացված կուրսերը։ Կուրսերի գոյութիւնը շարունակվել է միայն 35 օր և ունեցել մօտ 700 լսողներ՝ երկու սեռից։

◆ Կիրպիչնի նրբափողոցի վրա № 11 տանը ապրող պալատական խորհրդական Վլադիմիր Նիկօլայէվիչ Կալիշէվսկին օգոստոսի 11-ին յայտնել է ոստիկանութեանը, որ Թիֆլիսից իր և իր ընտանիքի բացակայութեան ժամանակ՝ իր տնից գողացել են 250 րուբլու արժողութեամբ հագուստեղէն։ Կասկած է յայտնել յուլիսի 20-ին արձակված դռնապան Մամէդի վրա։

◆ Մենք հաղորդել էինք «Մշակի» № 178-ում, որ երգիչ Կոստանեանի համերգը Արտիստական Ընկ. ամառային շէնութեան մէջ կայանալու է երկուշաբթի, օգոստոսի 16-ին։ Այժմ մեզ տեղեկացնում են, որ համերգը կայանալու է չորեքշաբթի, ամսիս 18-ին նոյն տեղում, մասնակցութեամբ երգիչ Բրօշիի։

◆ Դէրբենտի բանտի պահապաններից մէկը՝ Գրիգորի Պիվօվարօվը, ինչպէս «Кавк.» լրագիրն է հաղորդում, մի քանի անգամ նախազգուշացումն անելուց, հրացանով գնդակահար արեց քննութեան տակ գտնվող բանտարկեալ Տիգրան Տէր-Սիմէօնովին, որը պատուհանից խօսում էր կողմնակի անձանց հետ։

◆ Մինիստրների խորհրդի մօտակայ նիստերից մէկում քննվելու է գիւղացիական բանկերին իրաւունք վերապահելու խնդիրը, որպէսզի նրանք վաճառեն գիւղացիների հողերը իրանց սեփական հաշւով։ Ինչպէս յայտնի է, այդ բանկերը միայն միջնորդելու իրաւունք են վայելում։

◆ Բագուի նաւթարդիւնաբերական խորհուրդը վերջին նիստում որոշել է նաւթարդիւնաբերողների համագումար հրաւիրել նոյեմբերի 30-ին։

◆ Վրիպակ.—«Մշակի» № 177-ում մտել է հետևեալ սխալը. «Այդ ազգային երգերը Կոստանեանը գիտէ երգել шаблонական շեշտերով և յօյզերով»։ Պէտք կարդալ՝ «ոչ-шаблонական շեշտերով»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նոր-Բայազէտ, 11 օգոստոսի

Ամսիս 7-ին ծխ. դպրոցի բեմական դահլիճում սիրողների խումբը աշակերտ-աշակերտուհիների մասնակցութեամբ տուեց մի գրական-երաժշտական երեկոյթ յօգուտ Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղի։

Վարագոյրը բացվելուն պէս քառաձայն խումբը երգեց «Զարթիր սիրտ իմ»։ Ապա առաջ գալով Մ. Աւետեան մի բանախօսութիւն արեց յատկապէս հայկական միջավայրի մասին։ Զանազան օրինակներ բերելուց յետոյ, յարգելի բանախօսը ծանրացաւ այն բանի վրա, որ տեղական երիտասարդութիւնը (հայ ուսանողութիւնը) գնալով ռուսական և արտասահմանեան համալսարանները և այնտեղից գիտութեան պաշարներով վերադառնալով այլևս չէ հետաքրքրվում տեղական հարցերով, կտրված մնում է մեր միջավայրից, ուստի հայկական միջավայրը փոխանակ առաջադիմութիւն ստանալու՝ մնում է անշարժ, քարացած. իսկ հայ ուսանողութիւնը դառնում է օտար, եւրոպական կարգերի երկրպագու միայն։ Այդ տեսակէտից էլ,—աւելացրեց պարոնը,—մեզ պակասում է երեք բան՝ աշխատանք, աշխատանք և անդուլ աշխատանք՝ կուլտուրական ասպարէզում։ Աշխատանք, որ ժանգոտ խոփը փայլեցնում է ու ցեղում ինչպէս արծաթ՝ մեր չարքաշ գիւղացու ձեռքում, որի դարաւոր աշխատութեամբ անապատ դաշտերից ոսկի հատիկներ են ստացվում։ Թող մեր գիւղացու չարքաշ աշխատանքը մեզ օրինակ ծառայի՝ մեր աշխատութեան ասպարէզը դարձնելու մեր միջավայրը։ Եւ այդ առիթով Աւետեան յորդոր կարդաց, որտեղ ինտելիգենցիան՝ թէև սահմանափակ շրջանում՝ ինքնազարգացմամբ և ինքնաշխատութեամբ պարտաւոր է իր առաջին գործը դարձնել հայկական միջավայրը և հետաքրքրվել տեղական հարցերով, որոնք կարօտ են այդ ինտելիգենցիայի անմիջական աջակցութեան։ Նա խոստացաւ կազմակերպել դասախօսութիւններ այս ամառվայ սէզօնին։

Ապա երաժշտական խումբը երգեց երգեր և վերջը տուեց «Շուշան» օպերայի նախերգանքը քիւրդական շորերով և զանազան հին և նոր զէնքերով։ Բէգի դերում էր Վ. Աֆրիկեան։ Արտասանվեցին նաև մի քանի ոտանաւորներ թէ հայ և թէ ռուս բանաստեղծներից։

Պետրոս Դուրեանի «Իմ մահը» ոտանաւորը օրիորդ Գորոյեան արտասանեց շատ խրոխտ կերպով։ Փոքրիկ աշակերտ Ղամարեան կարդաց Թումանեանի «Մի կաթիլ մեղր» պատմութիւնը, մեծ զուարճութիւն պատճառելով հանդիսականներին, որոնց bis-երի տակ կրկնվեց նոյն պատմութիւնը։ Կրկնվեց նաև քիւրդուհիների հագուստով դուրս եկած աշակերտուհիների խմբական երգը. սրանք ձեռքներին բռնած կժերով, իբրուղներով, փարխաջներով և այլ անօթներով՝ ջրի ճանապարհին՝ հանդիպում են մի խումբ երիտասարդների, որոնց հետ փոխանակում են իրանց մտքերը խառնաձայն երգի միջոցով... Այդ տեսարանը խոր տպաւորութիւն է թողնում հանդիսականների վրա։

Երգիչների թւում փայլում էր օրիորդ Ս. Գասպար-բէկեան, որ երգեց «Ինձ մի խնդրիր» (սօլօ), իսկ ռուսաց բանաստեղծութիւններ Վ. և Ի. Արեշատեանները արտասանեցին առանձին շեշտերով։ Երեկոյթը կազմակերպել և կառավարում էր Վ. Աֆրիկեան, որը մեծ աշխատանք է ցոյց տուել։ Իսկապէս պէտք է շնորհակալ լինել պարոնից՝ իր եռանդի համար, որ ոչինչ չէր խնայել երեկոյթը աւելի շքեղ դարձնելու համար։

Հանդէսից յետոյ սկսվեցին պարեր։

Դահլիճը լի էր ընտիր հասարակութեամբ։ Մուտքը տղամարդկանց համար 1 րուբլի էր, իսկ կանանց համար՝ 50 կ.։

Գ. Սինանեանց

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Պետերբուրգի կոնսերվատորիայի դիրեկտոր պրօֆեսոր Ա. Գլազունովը դիմել էր ներքին գործերի մինիստրութեանը, որպէս զի թոյլ տրվի հրէայ երաժշտագէտներին մասնակցել հռչակաւոր կոմպօզիտոր հանգուցեալ Ա. Ռուբինշտէյնի անուան նուիրված հինգերորդ կոնկուրսին, որ տեղի է ունենում Պետերբուրգում, օգոստ. 9-ից։ Ներկայիս ներքին գործերի մինիստրութիւնը մերժել է պրօֆեսորի այդ խնդիրը, պատճառաբանելով որ հրէաներին թոյլ չէ տրվում ապրել Պետերբուրգում։ Եւ այսպիսով ռուսահպատակ հրէայ դաշնակահարները ու երաժշտագէտները կարող են մասնակցել ռուս կոմպօզիտորի անուան նուիրված կոնկուրսներին Վիեննայում, Պարիզում, Բերլինում, բայց և ոչ մի կերպ Պետերբուրգում։

◆ Ռուս գրող Լ. Անդրէևը, իր գրած «Յուդա» պատմուածքը դրամայի է փոխել, որը առաջիկայ սեզօնում խաղացվելու է Պարիզում։

◆ Մեր աշխատակից Յակովբ Գինջեանը թարգմանում է Գօգոլի «Ревизоръ»-ը Տ. Մակարեանի անուան մրցանակաբաշխութեան ներկայացնելու համար։ Թարգմանութիւնը կատարվում է գրական լեզուով, բացի Օսիպի դերից, որը թարգմանվում է Ղարաբաղի լեզուով։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Труды съѣзда дѣятелей по кустарной промышленности въ СПБ. 1910 г.

Մեր առաջ դրված է Պետերբուրգի Տնայնագործական Համագումարի ընդարձակ տեղեկագիրը այն բոլոր զեկուցումներով, որոնք այնտեղ կարդացվել են, և նիստերի արձանագրութիւններով։

Համագումարը, ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ ներկայ տարվայ փետրվար ամսի 21-ին և ունեցաւ մեծ աջողութիւն։

Համագումարին ներկայացված է մինչև 62 զեկուցում, որոնց մէջ քննված են տնայնագործութեան վերաբերեալ խնդիրներ։

Հաղորդել մանրամասնօրէն այն եզրակացութիւնները, որոնց յանգել են համագումարի պարապմունքները, անկարող ենք. բայց կարևոր ենք համարում ընդգծել, որ Պետական Դուման, ուշադրութեան առնելով համագումարի կայացրած որոշումները, իր կողմից հաւանութիւն տուեց 1) կազմակերպել տնայնագործութեան մանրամասն ուսումնասիրութիւններ, 2) մշակել դպրոցական և արտադպրոցական արհեստագիտական կրթութեան ծրագիր, 3) դիւրացնել կրեդիտի ստացումը տնայնագործների համար, 4) միջոցներ [illegible] և ուրիշ հիմնարկութիւնների բանալու պահեստներ, 5) դիւրացնել արքունական պատուէրներ տալը տնայնագործներին և 6) կազմել տնայնագործական արհեստի տարածման քարտէզը:

Տնայնագործութեամբ հետաքրքրվող անձերին յանձնարարում ենք ծանօթանալ համագումարի աշխատանքների հետ:

Ա. Ք.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՎՔԵՐ ՀՐԴԵՀԵՑԻՆ ԲՐԻՒՍԷԼԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

—

Մինչև այժմ տարածված էր այն կարծիքը, որ ցուցահանդէսի հսկայական հրդեհը Բրիւսէլում առաջացել է էլեքտրական հաղորդիչների միացումից: Սակայն Բեռլինի գաղտնի ոստիկանութիւնը գալիս է բոլորովին այլ կերպ լուսաբանելու եղելութիւնը: Ահա ինչ ենք կարդում այդ մասին «Кавказъ» լրագրում.

«Բեռլինի ոստիկանութիւնը իրան է վերագրում այն հսկայական յանցաւոր կազմակերպութեան բացման գործը, որը հրդեհել է Բրիւսէլեան համաշխարհային ցուցահանդէսի համարեա կէսը: Բեռլինում գիտեն, որ մօտ երեք ամիս առաջ Բրիւսէլ էին գնացել միջազգային կողոպտիչների կազմակերպութեան անդամներից՝ կազմելու ցուցահանդէսում գտնվող Թանգագին իրերի կողոպտման պլանը:

Դա իմանում են միայն այժմ... Բիչ ուշ...

«Յայտնում են նոյնիսկ՝ Թէ ով է եղել ղեկավարը. նա բելգիացի է, Գենտից, Ադոլֆ Ժէրնէ են կոչում նրան: Բեռլինի գլխաւոր փողոցի վրա գտնվող «Լօրուտակ» հիւրանոցում, որը պատկանում է մի գերմանուհու, գտել են մի տուփ ադամանդներով՝ 200,000 ֆրանկ արժողութեամբ:

«Խուզարկութեան նախընթաց օրը բիւրգեբուհու հիւրանոցում ապրողները շտապով Թողել և հեռացել են՝ չը մնալով հիւրանոցում ամբողջ օրը: Սկիզբներում նրանք շատ յաճախ իջևանում էին այդտեղ, իսկ նախ քան ցուցահանդէսի բացումը երկու շաբաթ ապրել են Ամալիա Կիրխների՝ հիւրանոցի տիրուհու մօտ:

«Բացի Ադոլֆ Ժէրնէից, որը տեղաւորվել էր ամենաընդարձակ սենեակում, կային նաև «երկու շէկեր», որոնք խօսում էին գերմաներէն, բրանդենբուրգեան բարբառով, և մի յոյն, որը իրան անուանում էր Տալիս. դրանք ապրում էին հարևան սենեակներում:

«Ադամանդներ պարունակող փաթեթը, որ մոռացմամբ Թողել էին գողերը շվէյցարի սենեակում, տուեց բաւականին գնահատելի տեղեկութիւններ Բեռլինի ոստիկանութեանը որովհետև այնտեղ կային այնպիսի փաստաթղթեր, որոնք ցոյց տուին, որ յիշեալ գողերը կապեր ունէին եթէ ոչ ամբողջ աշխարհի, կարելի է ասել՝ համարեա ամբողջ Արևմտեան Եւրոպայի կողոպտիչների հետ:

«Շնորհիւ այդ փաստաթղթերի պարզվեց, որ միջազգային ելուզակների բանդան վճռել էր կատարել Թալանը հետևեալ 3 տեղերում միաժամանակ հրձիգութեամբ. մուտքի մօտ գտնվող գլխաւոր շէնութեան մէջ՝ շփոթութիւնը կատարեալ դարձնելու նպատակով, «Պարիզ» պաւիլիօնում և անգլիական բաժնում:

«Եւ իրօք հրդեհը բռնկվել է միաժամանակ 3 տեղերում:

«Հրդեհաշէջ խմբի պակասութիւնը օգնեց ելուզակների յանցաւոր պլանին, որոնք ընդհանուր սարսափի վայրկեանին իբրև Թէ ազատելու նպատակով մտան այն բաժինները, որտեղ գտնվում էին ակնեղէնները:

«Ասում են, որ բոլոր կողոպտիչները հագնըված են եղել միատեսակ, գլխներին ունենալով սպիտակ կէպիներ: Նոյնիսկ կողոպտիչներից մի քանիսը ծառայում էին ցուցահանդէսում, որպէս առաջնորդներ: Եւ կասկած էլ չէին յարուցանում:

«Ձերբակալված են մինչև այժմ, կասկածվելով հրձիգութեան մէջ՝ 7 մարդ, միւսները Թաքնվել են:

«Դժբաղդաբար կատաստրոֆան առանց մարդկային զոհերի չանցաւ. հրդեհին զոհ են գնացել հէն 40 հոգի ցուցահանդէսի ծառայողներից»:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 օգոստոսի

ՆԷՅՖԱՐ-ՎԱՍՍԷՐ: Օգոստոսի 15-ին այստեղի նաւակայանն է հաւաքվելու գերմանական ամբողջ նաւատորմը. 16-ին տեղի կունենայ ծովային զօրահանդէս: 17-րդ զօրաբանակի 300-ից աւելի օֆիցէրները կայսրի հրամանով կը տեղաւորվեն նաւերի ու ականանաւերի վրա՝ մասնակցելու զօրահանդէսին:

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ: Քաղաքային ատեանը հաստատել է Ղրիմի ռուսական կուրորտային ակումբի կանօնադրութիւնը: Նրա գործունէութեան շրջանը Եալտան է, իսկ նպատակը՝ կուրորտ եկող հասարակութեանը յարմարութիւններ, հաճոյքներ և օգուտներ տալը:

ՎԻԼՆԱ: Դիւնենսկի գաւառի Պօստաւի աւանում հրդեհ առաջացաւ, որի ժամանակ այրվեցին երկու կին:

ՏԱՇԿԵՆՏ: Այստեղից գնաց Պետական Դումայի անդամ Սկալօզուբովը, որ եկել էր ծանօթանալու «Գօլօդնայա ստեպ» կոչված տեղի ոռոգութեան գործի տեխնիկական և տնտեսական կողմերի հետ, որի շարունակութեան համար խնդրում են յատկացնել մինչև 5 միլիօն րուբլի:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ: Ցուցահանդէսում բացվում են գիւղատնտեսական գործիքներ և մեքենաներ պատրաստելու դասընթացքներ՝ սկսած օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 1-ը և սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 18-ը:

Կ. ՊՕԼԻՍ: Ժամանել են ֆինանսների մինիստր Ջաւիդ-բէյը և նախկին մեծ վէզիր Հուսէին Հիլմի փաշան: Վերջինս յայտնել է «Թանին» խմբագրին, որ Ջերնօգօրիան համակված է իսկական բարեկամական զգացմունքներով դէպի Թիւրքիան:

ԼԻՍԱԲՈՆ: Կօնտր-մինանօսեց «Տեխօն» ջրասոյզ է եղել Կարվօերօ հրուանդանի մօտ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինւորական մասնագէտ-բժիշկների

Երթևեկ հիւանդների համար

Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ:

ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ է 50 ԿՈՊ.

Տէլէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ:

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.:

ՈՒԿԼԱՆԴԻԿՕՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.:

ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.:

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.:

ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից:

ԽՈՒԴԱԲԱՇԵՎ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:

ՍԱՐԱՊ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ.:

ՏԷՏՐԱՁԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.:

ԱՍՊԻՍՕՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2 ը ցեր.:

ԿԻՆ ԲԺ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.,

ՎԵՍԵԼՕՎԶՕՐՕՎ Ն. Ն.—Խիրուրգ. հիւ.: ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժամը 2—3-ը:

ՁՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրօտէրապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 4—5-ը:

ՄԿՐՏՈՒՄԵԱՆ.— սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ 10½—11 ժ. առ.:

ՊՕՆԴՕԵՎ—Ջղային հիւ. և էլեքտրօտէրապիա. ամեն օր, ժամը 2—3-ը:

Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնօզ, ատամների և ծառաների քննութիւն—առանձին վճարով: Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի:

(կ.) 356. 100—47

ԲԺՇԿԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. Ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչեւ սեպտեմբեր: Верхній бульваръ, д. кн. Гирей.

(ե. հ. կ.) 565. 0—36

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.

Արաս-Արաղսկայա, տուն Միրիմանօվի:

(ե. հ. կ.) 725. 100—27

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող. № 8

(կ. հ.) 564. 100—36

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ

Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Կատարում է սրսկումներ սակաւարիւնութեան, դեղնութեան և նիհարութեան դէմ: Լուացումներ, վէրքի փաթաթումն: Բժշկութիւն տղամարդի բուլութեան և սեռմնահոսութեան: ՄԱՍՍԱԺ ձեռքով և էլեքտրական: Ընդունելութիւնը տղամարդկանց՝ 3—4 ժ., կանանց՝ 4—4½ ժ.: Ջքաւորներին ձրի չորեքշաբթի օրերը: Семеновская ул., № 9, Վօրօնցօվի արձանի մօտ:

(կ. հ.) 913. 50—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КРЕМЪ НЕЛЛИ

NELLY'S CREAM.

Англійская аристократія предпочитаетъ всѣмъ другимъ средствамъ именно „Кремъ Нелли", какъ лучшее для смягченія кожи лица, рукъ и бюста. Въ Лондонѣ расходится до 1.000.000 бан. ежегодно.

Кремъ Нелли уничтожаетъ всѣ недостатки кожи, загаръ, веснушки, пятна и т. п.

Продажа у Мюръ и Мерилизъ, Гетлингъ, Акц. О-ва К. Эрмансъ и Ко и пр., а также во всѣхъ апт. и парфюмерн. магаз. Россіи.

Одной банки достаточно, чтобы убѣдиться въ его поразительномъ дѣйствіи.

Цѣна 1 р. 25 к. и 2 р. 25 к.
Въ провинцію налож. платежемъ на 50 к. дороже.

Для всей Россіи единств. складъ МОСКВА, Пречистенка, Б. Власьевскій пер., д. 3.

(М.130700) 423. 40—15

ԳԵՕՐԳԻԵՎՍԿԻ հայոց միդասեան երկսեռ դպրոցի համար հակաւոր է

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ

ՈՒՍՈՒՑԻՉ

դպրոցաւարտ, 16—18 դասով: Պէտք է երգեցիկ խումբ պատրաստէ՝ պատարագներին երգելու: Ռոճիկը 450 ր. և ճանապարհածախս: Բնակարան չէ տրվելու: Հասցէն՝ Георгіевскъ (Терск. обл.), Армянскому Приходскому Попечительству.

(ա. օ.) 944. 2—1

Մամուլի տակից դուրս եկաւ

ՄԻ ԼԻՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Գինն է 60 կօպ.

Соломоновская, 21.

ՍԵԴ. ՄԱՆԴԻՆԵԱՆ

(հ.չ.ե.) 934. 3—2

2 ԶԳԵՍՏԱՑՈՒ 4 ՌՈՒԲԼՈՎ

Տղամարդկանց հագուստեղէնի շրջանում նորութիւն է «Շէվիօտ Տուրինը»: Այնպիսի էժան գնով ինչպէս 2 րուբ., 4¼ արշ. կտորը, տղամ. ամբողջ զգեստացու, ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 րուբ. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տես. ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Այդպիսի 2 կտորը ուղարկվում է 4 րուբլով, ճանապարհածախսը՝ 70 կ., պօստով, վերադիր վճ.. առանց կանխավճ.: 2-ից և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհախսը ֆաբրիկայի հաշւին: Առանց ռիսկի, լրիւ երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում: Պահանջները հասցէագրել. въ фабрику шерстяныхъ издѣлій Т-ВА «ЭХО», г. Лодзь, № 70.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(ա. օ.) (В. 50359) 872. 17—12

Լոյս տեսաւ

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և Լ. ՇԱՆԹԻ կազմած

„ԼՈՒՍԱԲԵՐ"

հայերեն դասագրքի 1910 թւի հրատարակութիւնը:

Ա. տարի (4-րդ տիպ)—30 կ., Բ. տարի (3-րդ տիպ)—45 կ., Գ. տարի (3-րդ տիպ)—55 կ., Դ. տարի (2-րդ տիպ)—65 կ.:

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կողմից Թոյլ է տրված որպէս դասագիրք պետական դպրոցների համար:

Կենտրոնական պահեստը՝ հայ դասագրքը կազմողների և գրողների ներկայացուցիչ «Գիր» գրավաճառանոցում (Вельяминовская ул. № 7).

(հ. կ.) 914. 6—3

Dr. Obermeyer's
Herba Seife

ՉԸ ԿԱՅ լաւագոյն միջոց բացի բժշկական խոշոր հեղինակաւոր անձերի կողմից յայտարարված անփոխարինելի և ԲՈՒՍԱԿԱՆ

ՍԱՊՈՆ „ԳԵՐԲԱ"

ԴՕԿՏ. ՕԲԵՐՄԵՅԵՐԻ

պեպեններ, չոր եւ թաց բոսի, բշտիկների, պզուկների, բորի, քոսի եւ մորթու անմաքրութեան դէմ:

✻ ՀԱԶԱՐԱՒՈՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ!! ✻

Կարճատև գործածութիւնից յետոյ—լաւ աջողութիւն:

Ծախսում են դեղատներ եւ դեղագործ. խանութներ՝ փոքր կտորը 60 կօպէկով, իսկ մեծ կտորը 80 կօպ.:

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ.—Իսկականը միայն «ԳԹՈՒԹԵԱՆ ԽՈՅՐ» նկարով. իւրաքանչիւր կտորի վրա:

Գեներալ ներկայացուցիչ ամբողջ Ռուսաստանի համար՝ Д. РОЗЕНТАЛЬ, ВАРШАВА

(5,15,25) (В.39510) 665. 18—8

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն:

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ պարապմունքները կատարվում են կուրսերում Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtori-ում: Ուսիերն առնվում են բէալ կեանքից: Առարկաներն են. ա) ՊԱՐՏԱԴԻՐ.—1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական Թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն), 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավստ ձեռքի ուղղումն). բ) ՈՉ-ՊԱՐՏԱԴԻՐ.—1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) ապրանքագիտութիւն, 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) առևտրական Թղթակցութիւն օտար լեզուներով: Պարապմունքները կատարվում են և [illegible]: Ունկնդիրների թիւի շատութեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, առ. 10—2 ժ. և երեկ. 4—7 ժ.: Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում:

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(ու. կ. չ.) 907. 0—5

Լոյս են տեսել և վաճառվում են

ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

Կենսաբանական ուղղութեամբ կազմված

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ (տարրական մարդակազմ. և կենդանաբանութիւն) 204 երես, 70 կօպ.
ԲՈՅՍ (տարրական բուսաբանութիւն) 128 երես 50 կօպ.

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ», «Կենտրոնական», «Գիր» և «Փարոս» գրավաճառանոցները կամ կազմողին հետևեալ հասցէով՝ Кочубеевскій переулокъ, 13.

Վաճառվում են նաև

Վիլհելմ Բեօլշէ.—«ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ», գերմ. Թարգմ. Նիկ. Սարգսեան, գինը 40 կօպ.
Նիկ. Սարգսեան.—«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՅՆԵՐԸ» գինը 15 կօպ.

(օ. մ.) 889. 10—7

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և Նովթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընԹացքում:

Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվում են սեպտեմբեր ամսից ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով:

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են 1910 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:

Դասընթացքն աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան Թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ:

Դրանից անկախ՝ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և Թւաբանութեան համար:

Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, Телефонъ № 744.

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պէտի ծախս վճարելու: Գինն է 3 ր. 50 կ.:

(կ.ե.հ.) 930. 0—2

2 ԶԳԵՍՏ 5 Ր. 25 Կ.

Տարածելու նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կօպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) 4¼ արշ. ֆրանս. տրիկօ տղամ. զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով բրդէ կտոր: 2) 8 արշ. կտոր «Անգլէյ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր: Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կ.-ով: Ճանապարհածախսը 55 կ.: Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց ճանապարհածախսը մեր հաշւին: Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, въ фабрику ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(ա. օ.) (В. 50257) 871. 17—12

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Տրիումֆ» չէվիօտի մի ամբողջ կտոր 4¼ արշ., տղամարդկանց

ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ 2 ր. 75 կ.

Չը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և շքեղ: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Ճանապարհածախսը 55 կ.: Նոյնպէս ուղարկում եմ պատրաստ, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ ՊԻՁԱԿ 2 րուբլով տարվայ ամեն եղանակի մաշելի: Ճանապ. 55 կ.: 2 րուբլով ՇԱԼՎԱՐ ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված: Ճանապարհածախսը 35 կ.: Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը իմ հաշւին: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, фабрика ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(ա. օ.) (В. 50155) 870. 17—12

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական Թւաբանութիւն և Թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական Թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի մօտ: Ցանկացողների համար՝ առանձին վճարով [illegible] և ստենօգրաֆիա:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը:

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ: Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.

(հ.կ.) 884. 20—5

ՄԻ ՐՈՊԷ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԸՆԾԱՅԷՔ!





Երևի շատերը մեր այս առաջարկութիւնը բէկլամ կը համարեն: Դրանից խուսափելու համար մենք յայտարարում ենք, որ 300 րուբ. տուգանք կը տանք նրան, ով կապացուցէ, որ ստորև յիշված 18 հատ արժէք. առանձին իբրեւ չարժեն նշանակված առասպելական էժան գինը՝

ՄԻԱՅՆ 4 ՌՈՒԲԼԻ 85 ԿՈՊ. (փոխ. 15 րուբ.)

1) ՏՂԱՄ. ԳՐՊ. ԳԵՂ. ԲԱՑ ԺԱՄԱՑ. անգլ. իսկական սև պողպատից, ամուր շինուածք, անկէր (ոչ ցիլինդր), ընԹացքը քարերով, չը սեղմվող զսպանակով, փչուց զերծ պահող ապակիով, ձայնաւոր և մինչև րօպէները ստուգված ընԹացքով: 2) ԷԼԵԳԱՆՏ ՇՂԹԱՅ իսկական նիկէլից, երկար կամ կարճ: 3) ԲՐԻԼՕԿ նոյն մետաղից: 4) ԺԱՄԱՑ. ԳՈՂԱՑՎԵԼՈՒՑ ՊԱՀՊԱՆՈՂ ԻՐ: 5) ԻՍԿԱԿԱՆ ոսկուց՝ 56 յարգի՝ մատանի (տես նկարը) արհեստ. կեղծ ադամանդով: 6) ԱՄԵՐԻԿ. ՊԱՏԵՆՏ. ՉԸ ԲԱՑՎՈՂ ԱԾԵԼԻ «Ժիլլետ»-ի, 5 ա. երաշ.: 7) ՆԻԿԷԼԵԱՑ ԹԱՍ: 8) ՆԻԿԷԼԵԱՑ ՎՐՁԻՆ: 9) ԿԱՇՈՒԷ ՊՈՐՏՄՕՆԷ փողի համար, 6 բաժ. (առ. բաժ.՝ ոսկու համար), արտասահման. իսկ. կաշուց և մետաղի. փականով՝ պարունակելով իր մէջ գաղտնի տեղ կնիքի համար: 10) ԿԱՈՒՉՈՒԿԷ ԿՆԻՔ պատուիրողի անուն-ազգանունով: 11) ՄԻ ՄՐՈՒԱԿ ԹԱՆԱՔ կնիքի համար: 12) ՆՈՐՈՒԹԻՒՆ: Տնային պատենտ. տպարան, որ պարունակում է մօտ 200 տառ, Թւանշ. և կէտադր. նշ., տպելու համար այցետոմսեր, բլանկներ, ծրարներ, այլն: 13) ՏԱՌԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՆԵԼԻՔ: 14) ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ: 15) ԲԱՐՁ ՏՊԱՐ. ՄԵՏԱԿԱՆ ՄՈՒՐԻ Հ. 16—18) ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ՃՇԵՂ ՆԷՍՍԷՍԷՐ, չուրջը սաղրի կաշուց, պարունակելով իր մէջ յղկված հայելի, սանր, պրիբօր՝ ատամներն ու ականջները մաքրելու համար: Այդ բոլորը միասին՝ փոխ. 15 ր. միայն 4 ր. 85 կ.: Տղամ. կամ կան. փակ (խուլ) ժամաց. (ցիլ.) 17 յաւելուածներով 5 ր. 35 կ.: Տղամ. կամ կան. խուլ ժամաց. ամերիկ. իսկական նոր ոսկուց, շքեղ ձևի և գեղազարդ՝ 17 յաւելուածով 6 ր. 25 կ.: Ուղարկ. ենք չուտափոյԹ, պատուէրն ստանալուն պէս, երաշխաւորելով ճիշդ ընԹացքի համար, առանց կանխավճարի: Ճանապարհածախսը 50 կ., Սիբիր և Միջին-Ասիա 90 կ.: Պատուէրները խնդրում ենք հասցէագրել՝ Въ „БАЗАРЪ НОВОСТЕЙ", Варшава. Граничная 5—40.

P. S. Խնդրում ենք կատարեալ հաւատ ընծայել, քանի որ ուղարկում ենք լաւ յատկ. ապրանք, որի համար և ստանում ենք բազմաթիւ շնորհակալ. և գովասան. նամակներ:

Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն:

(31, 15, ս. 5, 25) (В. 51809) 879. 4—2

Типографія „Экономія" Большая Ванская № 3.